



ԾԱԶԻԿ



ՆԱԲԱՐԱՐԵՐՐ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

16^{րդ} ՏԵՐԻ. — ԹԻԻ 2. (541)

8 ՓԵՏՐՈՒՄ 1903

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարժումն կեանքը

Թէ ինչ և չիլիցայ ամուսնանայ

(Նորակէտ մը՝ մենախոսութեան շուրջ)

Գ.Ա.Ն.Ի

Մշուէին մէջ

(Ատլանտեանի յիշատակներէս)

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ԴՐՈՒՆԻ

Լուրեր զանազան ու զարմանազան (Ոտանաւոր)

Ս.Բ.ԻՍՈՒՍ

Ա.Ն.Խանյան երեսփոխան առեւտրական հրապարակին վրայ

(Մանկութեան մը և նուիրատուութեան մը առթիւ)

Ա.Բ.ԲՈՍ

ԴԻՏՈՒԹԻՒՆ ՆԻ ԳԱՂԱՐԱՒԵԱՅ

Թալանի զեղադրանքները դատարանները

Գ.Բ.Ի

Մեր հորիզոնէն

Նոր գիրքեր

Հրակէ հրնկէ

Գիտական

M'aimait! (Մնորայ ոտանաւոր)

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Կաղամախը

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

Կաղամախը

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

ԿԵՆՏԵՆ ԲԱԴԵՆԻՆԻՐԸ

Խրատներ՝ դժուարամարտութեան դէմ

(Ոտանաւոր)

ՏՈՔԹ. ՄԷՏԻՖՈՒՍ

ԿԱՆԱՆՅ ԲԱԺԻՆԸ

Սեղան մը ինչպէս կը յարգարուի

ԿԱՆԱՆՅ ԲԱԺԻՆԸ

Սեղան մը ինչպէս կը յարգարուի

ԿԱՆԱՆՅ ԲԱԺԻՆԸ

Կապուածները

Մ. Շ.

Լուրեր

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մրցումը եւ Պոլսոյ հրապարակին կապուածները

Խ. Պ.

Լուրեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ ԴԻՏՈՒԹԻՒՆ

60,000 ֆրանք շահած

Մահն ամուսնան մէջ

Նամակ կա՛մ որ եւ է գրութիւն պէ՛տք է ուղղել

ՄԻՓԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆԻ

درعليه ده غلطه ده قورشونلو خاتمه نومرو ۷ زاغیک غزته سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԾԱՂԻԿ»

Կալարա, Բուրճումլու Խան քիւ 7

RÉDACTION DE LA REVUE „DZAGHIK“

Kourchoum Han N° 7, Galata, Constantinople.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

**ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԾԱՂԻԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԿԱՆԽԻԿ Է ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ**

Գաշառներու համար	տարեկան	60	դր.
„ „	վեցամսեայ	50	„
Պոչոյ համար	տարեկան	50	դր.
„ „	վեցամսեայ	25	„
Արտասահմանի համար	տարեկան	14	ֆր.
„ „	վեցամսեայ	7	ֆր.

ԶԵՌՔԷ ՀԱՏԸ ՔԱՌԱՍՈՒՆ ՓԱՐԱՅ

Շաբաթաբերք Ծաղիկ ստանձնած է հատուցանել Օրաբերք Ծաղիկի օրէն
բաժանորդներու ոչնեցած պահանջը

Միշտ կողմէ, Շաբաթաբերք Ծաղիկ, Օրաբերք Ծաղիկի օրէն գործակալներու
եւ բաժանորդներու վրայ մնացած պահանջները զանձնելու հոգը իր վրայ ա-
ռած ըլլալով, կը հրաւիրէ որպէս զի բոլոր, Օրաբերք Ծաղիկի օրէն պարտք
ոչնեցող գործակալները եւ բաժանորդները, փոշրան իրենց պարտքերը վճարել:

Շաբաթաբերք Ծաղիկի ներկայ թիշէն սկսեալ թերք կ'ընդունին միայն
վճարող բաժանորդները: Անոնք, որոնք կ'ոչգեն Շաբաթաբերք Ծաղիկի բո-
լոր թիշերը կանոնաւոր կերպով ընդունիլ, պարտաւոր են վճարել իրենց
բաժանորդագիրը:

Առանց բաժանորդագրի ներփակման բաժանորդագրուելու համար եղած
գրութիւնները նկատողութեան չեն առնուիր:



Խառն ժողովը , որքան որ թեթեւացած է , շափաքուած ելքը տալով կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն , լսաց միսկոզ (է) ալ իր հասարակութենէրը միշտ կարեւոր են , նկատողութեան աննկուս համար ընթացիկ ու յարաբերական խնդիրները : Խառն ժողովի վերջին չորեքշաբթի օրուան նիստը որ յապուստար էր , գոհունակութիւն պատճառելու բոլոր հանգստանքները աւելու : Նիստը տեղի ունեցավ Պատրիարքին նախագահութեամբ եւ ատենագիտութեամբ Վսեմ Գորբիլի Լէֆ. Նորատուրկեանի , Վսեմ Գառնապետին վարչական տաղանդն ու բազմաթիւ խնդիրները կարողութիւնը , կարեւոր տարրերէն , ժողովին խորհրդակցութեանց արդիւնաւոր ըլլալուն նկատմամբ : Աւելնալով պատճառաւ սպասելու որ վերջին չորեքշաբթի օրուան նիստէն սկսելով , Խառն ժողովին սեղանին վրայ միշտ կարեւոր գործերու օրակարգ մը պիտի ըլլայ , այս կերպով , յարաբերական ու Պատրիարքութեան խնդիրները բանակցութեանց ել թափանցելով զանաք լուծելու համար , թաղանթներ ժողովարաններու արտոնագործներու խնդիրը , նոյն իսկ վերջին չորեքշաբթի օրուան նիստին նկատողութեան աննկուս լուծում , առայդ պէտք եղածներն ալ օրոշուելով :

ԹԷ ԻՆՉՊԻ ԶՈՐՅԱՅ ԱՄՈՒՍՆԱՆՈՒ

(ՆՈՐԱԿԷՊ ՄԸ՝ ՄԵՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ ՁԵԻՈՎ)

[Համարձում՝ Ամբակումեան, մենախոսու-
թեան հերոսը՝ կը ներկայանայ իր ունեւորներէ-
րուն՝ քսան տարի առաջուան Բարեկեան արդու-
զարդին մնացորդները ներկայացնող ամսանոյսին
զգեստով մը՝ որուն մասերը գծուաբովութեամբ
կը հաշտուին իրարու հետ. շաքանկագոյն պի-
մուռ մը, ճերմակ բաճկոնակ, ճերմակ վրայ ու
գիծերով քառակուսի (quadrille) տարած մը
Ֆրանսէզոյն bouffant փողկապի ծաղիք մը՝ բաճ-
կոնակէն դուրս յարդող շապիկէ մը վրայ ինկած
էն։ Ուրբերը՝ Richelieuներ։ Մազերը խնամքով
սանտորուած եւ իւզոտած են։ Պեխերը — որոնք
ներկը կը մատեն — սլորուած — Երեսօտարդի
յաւակնութիւններ ունեցող ծեր ամուսին տղաբար
մը։]

Թէ ինչո՞ւ համուսնացայ . . . պար-
զապէս չարազանց փափաքած ըլլալու հա-
մար . . . ուրիշ պատճառ չկայ թէիւ այս
պատճառն ալ չատ չբողոքող իրողու-
թիւնը . . . Ո՛ր պատճառը իրողութիւնը
կը բացատրէ աղէկ, Պ Աստիւնն սնան-
կանալը կընայ բողոքող, որինակի հա-
մար, որ տիկին Աստիւնն արդի գործը
մէկէն իմէկ նոր շքեղութիւնով մը փայլի,
կամ Պ. Ուստիւն հարբիւն անկողնոյ ծա-
ռախլը կընայ պատճառ մը կողմէ իր
չնորհալից կիսուն ուրախութիւնէն . . .
ուսնալուծ։ Անշուշտ ոչ։ Եւ սակայն
եթէ անգամ մը գործին ներքին կողմը
գիւն ուրիշ . . .

Ինչ է նէ, ներքեք որ նորէն համուս-
նանալու պատճառներուն անգրագառ-
նաւ։

Նախ ներկայացուիր. (Խնք՝ Երբ կը
ներկայացնէ՝ ներկայացնողի եւ ներկայա-
ցողի գերեզ միանգամայն կատարելով)
Համարձում Ամբակումեան. (չեղանկով)
չփայտած . . . Բարիքի իրաւագիտական
համալսարանէն, սակայն կատարելապէս
փայտած բոլոր սիրաբանական համալսա-
րաններէն . . . միեւնոյն Բարիքի. նախ-
կին տիրողստոր շատ մը բարձրասնու-
թիւններու, որոնց լատիւնը «կալուա-
ծատէր» յատկութիւնն էր. 45ր անցու-
ցած՝ երբ տիկիններ եւ կարգելիք ազգիկ
ունեցողներ չկան հանդիսականներուն
մէջ, եւ հազիւ 35 տարեկան՝ երբ այս
երկու յարգամեծար դասակարգին ընկե-
րակցութիւնը վայելելու բարեբախտու-
թիւնը ունինք։ Այժմ զբաղած բնախօսա-
գիտեցողագիտական, տնտեսա-մեքենա-
կան, եւ տրամա-հոգեբանական կնճոտ
խնդիրներով, որոնց մօտաւորու լուծումը
կարեւոր արդիւնքներ կը խոստանայ քսան
տարիէ ի վեր . . . չէնք չնորհք մարդ-
մըն եմ ինչպէս կը տեսնէք, կատարելա-
պէս կարող երջանկութիւնը ապահովելու
զիս իրեն կեանքին ընկերը ընդունիլ ու-
զող եւ պահանջուած պայմանները ներ-
կայացնող օրիորդի մը . . . (շատ լուրջ)
որ կրնայ այդի մըն ալ ըլլալ։

Պահանջուած պայմանները . . . հա-

նելուկ մը ձեռքի համար, այնպէս չէ՞։ Հիմա
պիտի լացատրեմ։

Բարիքի մէջ բաւական հետեւելէ ետքը
իրաւաբանութեան, որ այնքան համոզիչ
ծնուով կ'աւանդուի Boul' Michet taverne-
րուն մէջ, օրիշ մէկը հեռագիր մը առի
ընտանիքիս մէկ բարեկամէն՝ որ հօրս ծանր
հիւանդութենէ մը բռնուած ըլլալը ծա-
նուցանելով անմիջապէս Պոլիս զանա-
լուս պէտք կը ցուցնէր (յայկան շեղտե-
րով) խեղճ հայրս . . . որքան ցաւեցայ
այս հեռագիրը ստացած ատենս, նանկէլէն
զատուելու ստիպուելու համար, որ այն
ատենը սրտիս գիցուհին էր . . . Սա-
կայն պէտք էր մեկնիլ, (կ'արտասանէ)
Պէտք է ելլալ ե՛կ ընդունէ գիւ հուսկ բարե-

Կարծեմ բոլորովին շիտակ չըսի, սա-
կայն հոգ չէ։ Անմիջապէս մեկնեցայ ու-
րեմն եւ արովնտեւ ձեպընթացը դեռ
չկար, ինը օրէն Պոլիս հասայ . . . Պոլսոյ
քարափը օտք կ'ոխած ատենս, (յ'ուրիշ)
սխալեցայ, քարափն ալ չկար։ Պոլիս օտք
կ'ոխած ատենս ուրեմն . . . (յայկան) հայ-
րըս մեռած էր արդէն . . . խեղճ հայրս
(ազգէյը կը սրբէ, ու ինքզինքը ժող-
վելով կը ս սի շուտ շուտ (souffir) հայրս
մեռած էր ինծի ձգելով իր բոլոր կալ-
ուածները որոնք տանըսինք հազար ու-
կիւ արմէք ունէին։ Հոս հասնելու պէս
արդէն ամէն մարդ ինծի ըսեք էր թէ
պէտք էր Պոլիս մնալի հօրս տղը բռնե-
լու համար ինչ որ անմիջապէս բրի
հովանաւորութեան տակ առնելով Con-
cordia երգչուհիներէն մէկը՝ որ կ'երեւի
թէ շատ հաճելի է եղեր բարի ծըր-
նին. (ծալտով մը՝ զրեք ուրախ) է՛, բարեկամներս, եթէ գիտալիք ուրախ
կեանքը, զորանցուցի անկէ ետքը. Փոն-
գորտիայի հայրական աւանդը՝ յայրու-
թիւններու երկար շարք մը ունեցաւ՝ ո-
րուն մէջը իրենց արժանի տեղը գրաւե-
ցին թոխն ու խարտեաչը (կ'երգէ)

J'aime la brune et la blonde

(Պատմութիւնը կը շարունակէ) Սիրտս
շատ բոխ է, ո՛վ հանգիստականներ, եւ
իրը զարգացած գեղեցկազէտ չեմ կրնար
առանց գնահատումիս անկեղծ գրաւա-
կանը ընծայելու անհնիւ տեսած մէկ գե-
ղեցկութեան քովէն . . . երբ անիկա
տրամադիր է այդ գրաւակներ ընդունե-
լու . . . տասը տարի աստիկ անցաւ . . .
միշտ զբաղած էի գեղեցկութիւններու
գնահատումով . . . ատեն եղաւ որ երկու
հատը միանգամայն տիրեցին սրտիս . . .
եւ ատեն եղաւ որ տիրողներու թիւը
չորս հինգի հասաւ . . . Է՛, չէք գիտեր
թէ այս տիրուհիները ո՛րքան պահանջկոտ
են իրենց տիրապետութեան մէջ. շատ
փափուկ ու դժուար գործ մըն է անոնց
չորս հինգը միանգամայն վարելը. չէք
տեսներ, գրամի գործերու մէջ հազարաւոր
մարդիկ կառավարելու կարող ջոյ վաճա-
ռականները շատ անգամ անճարակ կը մը-

նան իրենց կնոջը ու հոմանոյն մէջ տեղը . . .
(Կէկէն ի մէկ լուրջ ձեւ մը կ'առնէ) մարդ-
կային կարողութիւնը չի բաւեր ամէն գործ
ընդգրկելու . . . մանաւանդ երբ լատա-
գոյն ընդգրկումներով զբաղած է. սրտի
գործերու կատարեալ յաջողութեան մէջ
գտնուելուն փոխարէն, հաւասարապէս
կատարեալ ձախողութեան մը մատ-
նուած էին գրամի գործերս . . . Կալուած-
ները ծախուելու վրայ էին մէկը միւսին
ետեւէն, շնորհիւ հաւատարիմ գործակա-
տարի մը՝ որ մէկ կողմէն կալուածներ
ունենալու անտեղութիւններ կը թուէր
ինծի, եւ՝ միւս կողմէ՝ իր հաշտոյն կալ-
ուածներ կը գնէր ինձմէ շորթած ստակ-
ներովը, (եղերեքական) վերջապէս հա-
սաւ վայրկեանը՝ ու վերջին կալուածին
ալ գնորդի մը անուան փոխանցումին
գործողութիւնը կատարեցինք։ Արժէքը
կրնար ինծի տարի մը ապրեցնել սովո-
րական կեանքով, եւ անարժան համա-
րեցի կեանքիս ձեւը փոխել՝ բաղդատա-
պէս անկարելորդ դուրս մը քիչ մը ա-
ւելի զիմացնելու համար. անհոգութիւնը
չարունակեցի ուրեմն, միշտ հաւատարիմ
թէ բարի ստատանալ մը օգնութեան կը
հասնի վերջապէս ինծի նման ամբողջ
կեանքը ստատուհիներու ընկերութեանը
մէջ անցնող մէկուն։ (Քիչ մը աւելի
շուտ), Արդ, այդ ստատանան ներկայա-
ցաւ՝ Պ Նուամ Պոմպոսեանի դիմակին
տակ, որուն շատոնց կը հանդպէի Բե-
րայի սրճարաններուն մէջ, առանց երբեք
իրեն հետ խօսակցելու առիթ մը ունե-
ցած ըլլալու։ Աղէկ չեմ յիշեր թէ Լիւք-
սէնպուրկի մէջ է՞ր թէ Ալլանտիտի մէջ .
պատկերազարդ լրագիրները թղթաւորու
զբաղած էի, ինչ որ գործ չունեցողներու
գերադոյն զբաղումն է այդ հաստատու-
թիւններուն մէջ։ Պ. Պոմպոսեան մօտեցաւ
ինծի եւ յարգանքով բարեւելէ ետքը,
կարեւոր խնդրոյ մը վրայ խօսակցիլ ու-
զելը յայտնեց .

« — Հրամայեցէք, պատասխանեցի,
զարմանալով որ Պ. Պոմպոսեան կարեւոր
գործ մը կ'ունենայ ինծի հետ անանկ ա-
տեն մը, երբ կարեւոր թէ ոչ ամէն գործ
լմնացած էի եւ արդէն։

Համակիր լատալարանէ մը ետքը, ո-
րուն մէջ խօսակցիս միշտ կեանքիս հե-
տեւած եւ ճաշակիս նրբութիւնը գնահա-
տած ըլլալը կը յատնէր, Պ. Պոմպոսեան
յարեց, (խօսակցութիւնը ձեւացնելով) .

« — Լսեցի, Պ. Ամբակումեան, թէ ձեր
ամբողջ կալուածները ծախած էք եւ թէ
գրամական տեսակէտով առջի վիճակը
չունիք։

« — Արդարեւ . . .

« — Եւ մտածելի թէ ձեզ նման անձ-
նաւորութեան մը անարժան է գրամա-
կան ա՛ծկ լինան մատնուիլ . . .

« — Ես ալ շնորհակալ եմ։

« — Արդ, մտածեցի թէ նոր հարստու-

թիւն մը պէտք է գտնուի ձեր տրամադրութեանը տակ :

«—Շատ համակիր մտածում մը :

«—Ահա՛ կու գամ իմ ծառայութիւնները ձեր տրամադրութեանը տակ գնելու, այդ հարստութիւնը գտնելու համար :

«—Շնորհապարտ եմ, սակայն չեմ հասկընար թէ . . .

Պ. Պօլպոսեան բեմասացական ձեւով լը հայցուց ինծի :

«—Երբեք մտածած էք ամուսնական կեանքի մը, Պ. Ամբակումբան :

«—Ո՛չ, չիտակը ժամանակ չէի ունեցած :

«—Սակայն կ'արժէ որ մտածուի անոր վրայ, ամուսնութիւնը մարդկային բնականութեան հիմն է, անով է որ կը յաւերժանայ մարդկային սեռը աշխարհի վրայ :

«—Իրաւունք ունիք :

«—Անկեա կ'ընծայէ միութարութիւններ զորս կարելի չէ գտնել ուրիշ ո եւ է կեանքի մէջ :

«—Պէտքը չէի զգացած :

«—Վերջապէս անիկա կրնայ ընծայել հանգիստ կեանք մը, որուն օգտակարութիւնը ոչ ոք կրնայ ուրանալ :

«—Իրաւունք ունիք :

«—Ահա այս շարժարթները աչքի առջեւ բերելուս հետեւանքն է, յարգամեծար Համբարձում Ամբակումբան որ մտածեցի ձեզ թելադրել ամուսնութիւնը :

«—Միթէ կարգուելու ազդիկ մը ունիք :

«—Ո՛չ, Պ. Ամբակումբան, իմ մասնագիտութիւնս է ամուսնութիւններ ստրքել անցելուն մէջ հարուստ անձնաւորութիւններու ու ներկային հարուստ եղող կրնեալու միջեւ :

«—Գնահատելի մասնագիտութիւն մը :

«—Հետեւապէս, եթէ կը հաւանիք, պիտի առաջարկի ձեզ ցուցնել քանի մը հարուստ ազդիկներու եւ այրիներու :

Խօսակցիս առաջարկութիւնը բարկութիւնս շարժեց :

«—Զիս գուցենք մի, բոյ, (վնասկան) երբեք, ազդիկտեսը լսեմ էի. սակայն առաջին անգամն է որ փեսացուն տեսքի հանելու խօսքը կը լսեմ :

Խօսակցիս համոզկեր ձեւով մը պատասխանեց .

«Մի բարկանալ, բարեկամս, բաւած նոյն խի ձեզ նպատաւոր է :

«—Ի՞նչ պէս :

«—Ազդիկտեսի համար ո՞ր կ'երթան. ազդկան տունը, այնպէս չէ : Այսինքն փեսացուն հարսնցուն ռաքը կ'երթայ. մինչդեռ իմ ըսած ձեւովս տրամադրելի

ազդիկներն ու այրիները պիտի գտնուին մասնաւոր տեղեր, ուր դուք ալ պիտի երթաք ինծի հետ, պատահաբար :

«—Ես անանկ մասնաւոր տեղերէ կ'նրկ չեմ առներ :

«—Սխալ հասկցաք : Ի՞նչու համար եղած են՝ ձմեռը՝ Սալանտար, Պօլ-Մարչէն, Պօլար-Լիմանը, ամառը՝ Թաքսիմի, Թէփէ-Պաշրի, ու Պէպէթի պարտէզները, Գալէնտէրը, Պէօյի ք-Տէրէի քարերը, կղզիներուն նաւամատոյցի կաղնիօնները, եւ՝ ամէն եղանակի մէջ՝ կարգ մը համաբաւար ու խտագնացութիւններ :

«—Ինչու համար :

«—Որպէս զի այս տեսակ զոգարիկ հանգիստ մեները զիւրութեամբ կարենան տեղի ունենալ :

«—Երբեք չէի ենթադրած :

«—Այո՛, բարեկամս, ես որ քստն տարիէ ի վեր այս մասնագիտութիւնը ունիմ, ահագին յաջողութիւններ ձեռք բերած եմ այս միջոցով :

«—Խօսքին կարճը. հիմա ի՞նչ պիտի ընենք :

«—Պիտի բարեհաճիք զիս ընկեր ընդունիլ ձեր պոռոյտներուն մէջ, ես այս ձեւով զձեզ պիտի ներկայացնեմ ունեւոր օրիորդներու ու աղիկներու, եւ չեմ կասկածիր թէ ձեր անսոգիտ ձեռքերով զիւրութեամբ ձեզ պիտի գրաւէք անոնց մէջ մէկուն սիրտը. այն ատեն . . . (Էստանդով) վաղնքը եկեղեցի, կապր ամրապահ գելու համար :

Այս խօսակցութեան յաջորդող օրէն սկսելով Պ. Խօսակցիս անբաժանելի բնկերը եզայ : Այսօր՝ հոս, վաղը՝ հոն, միւս օրը՝ աւելի հեռուն : Այսօր խանութները՝ Ղալաթիոյ մեծ-ճամբան, վաղը աւելի խան մը՝ Պոլսոյ կողմը, երրորդ օրը՝ հարիւր հազար քոնսօլիտէ Քէօտէ-Լիօնէն պտահած : Այսօր քառասունը անցուցած նոնայիկ մը՝ որ տասնութեց տարեկան ազգկան յաւակնութիւններ ունի, վաղը՝ փսուենաց սարի մը՝ որ հաւաքիչ մը կը փնտռէ իր կալուածներուն համար, երրորդ օրը՝ մսկաւ կատուի նազանքով տարի մը՝ որուն մտաւորաբար բարիքեան chic է մանուանդ : Ահ, բարեկամս, ասանկ նպատակաւոր ամուսնութեան մը ելք անգամ մը, եթէ կ'ուզէք մօտէն ճանչնալ բոլոր քառասունքները որոնց, կրնանք կարող են : Նոր ընկերս ինծի մտերմաբար տեղեկութիւններ կու տար մեր տեսնելիք օրիորդներէն ու այրիներէն իւրաքանչիւրին բնաւորութեան վրայ : Այսինչին հետ խօսքը պիտի եւ բօքերի

միայ բերելու : Իրեն հաճելի ըլլալու համար, երկրորդին միայն օգտութենէն ու փութեանէն ետեւ հաց չհանելէն ճոտելու է որպէս զի զքեզ գնահատել, մինչդեռ անմահ մարդու մը ազգեցութիւնը կ'ընէք երրորդին վրայ եթէ կարենաք ելքը ժամ շարունակ Բարիգի Օրէրա-Փօմի բնկաւ Մօլլէն-Թօմին վրայ խօսիլ : Պոլսու ամէնէն բազմազգ աճնաւորութիւնը եղալ միջ մօտէն չեմ գիտեր ի՞նչ պատճառով, թերեւս նոր ընկերս յարստութեան քաջայեղութիւններուն հետեւած քովը, կատարի փեսացու մը եղեր էի : Համառոտապէս որ բոլոր կաճեցողութիւնները կ'աշխատէին որ եւ է քսակաւոր սեռը մը գրասեղան : Սակայն, աւագ, կ'եւեւի ու չափ զէջ համարու մը ունէի իրր տնտեսողէտ կարգուելիք այրիները ու ազդիկները՝ որոնք այնքան կը տառաբեւէին ճշգրիտ ու իտէպի տեսակէտեւր մ' կ'եւեւի թէ աւելնքն ալ համաձայն էին մօխոգի համար ունեցող էրիկ չառնելու որոշմանը մէջ : Տեսակցութիւնները՝ որոնք սիրովի կ'ըլլային՝ առաջին անգամուն, տարօրինակ կերպով կը գրտանային ի' վրաս ազդիկ քննութիւն մը կատարուելէն ետքը : Կր տեսնա՞ք մի վաշխատուի զգուշութիւններ ունեցող սա կ'ծի հարսնգունները . (բարկութեամբ շոտ շոտ խօսեցով) այս անյաջողութիւնը անձնաւորութիւնս գրգռեց եւ որոշեցի կատարել յոն իսկ Էստանի ազդկան մը հետ : Հոն աւելի մեծ անյաջողութիւն, եթէ հարուստներու երբեմն հաշիւը կը գահեն քառասունքի, փորձառութիւնը ինծի սորվեց թէ՛ Էստանները հաշիւ կատարեալ զանգուածներ էին : ազգատ ազդիկ մը անել ու զեցի այն ատեն . (ուսելի մեծ բարկութեամբ) Ի՞նչ պիտի բոք այս տեսակ ազդիկ մըն ալ մեր մեկուն : «Խնք անոր ծախքին ի՞նչ պէս կրնանք հասնիլ» պատասխաններ էին : Այլ զայրութիւն չափ չունէր. սրտի գոհուանակութեամբ պիտի աճի՞նք իմ մասնագիտութիւնս ալ, եթէ գոնէ ծիծաղելի դարձած չըլլայի. սակայն նկատեցի թէ ամբողջ գացած տեղերս նեղանալով մպիտանելով իրարու կը ցուցընէին զիս կատար ձայնով մը բսելով. «Նորէն որոն համար եկեր է արդեօք», այն ատեն որոշեցի ալ որ եւ է հանրային տեղ չերթալ, ճգնաւորի պէս՝ սենեակիս մէջ կ'ապրիմ ամիսներէ ի վեր . . . : (Եզրակցեցով) ահա, բարեկամներս, թէ ինչու չկրցայ ամուսնանալ :

ԳԼԱՆԻԿ

Մ Շ ՈՒ Շ Ի Ն Մ Է Ջ

(ԱՏԼԱՆՏԵԱՆԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՍ)

Սառնակները և մեկնելու ի վեր, որ մեր եւ գիշեր մը անցած էր Բիշ մը տա-
րորինակ հնչէ թերեւս ցամաքի մարդոց
ականջին, եթէ բնութիւնը բոլոր՝ չորհրդա-
ւին մէջ գտնուողներս, ցամաքին տպա-
ւորութիւնը կորսնցուցած էինք։ Շատ
շատ մտապատկեր մըն էր ան մեր գիտուն
մէջ, թրխուած յիշատակին չափ հեռուոր
սիրելի մը, որուն պատկերն ալ չունիս
քովը թէեւ առաջին անգամ չէր, որ ծո-
ւղու ճամբորդութեան մը միջոցին ցամա-
քին տեսքը կը կորսնցնէի, սակայն ուրիշ
պարագաներու, հետեւեալ առտուն,
օրուան յոսին հետ ցամաքն ալ տեսնելու
հաստատ հաւատքը, միշտ ցամաքին կա-
պալ էր զիս։ Այս անգամ բոլորովին տար-
բեր էր կրած տպաւորութիւնս։ Նախորդ
օրը երեկոյեան զէմ միայն մեկ-
նած էր չորհրդաւոր Սառնակներէն, եւ
այս իրիկուն, նաւուն կամրջակին վրայ,
արեւուն վերջին ճառագայթներուն խաղը
ջուրին փոխերուն մէջ զիտած ատենս,
բնաւ յոյսը չունէի թէ, հետեւեալ առտուն
երբ նորէն, կամրջակին վրայէն, միշտ ծա-
ղող արեւին առաջին ճառագայթները ող-
ջունեմ, ոգիի մը պէս ջուրին ալքերուն
մէջէն ծնող գամաքը, գէթ հեռուն հե-
ռու, պիտի փռուի հեռագիտակով գիտուած
իմ ակնյառումս առջեւ։ Մեր չորհրդաւոր
Սառնակներէն մեկնած, 3000 մղոն, ա-
ւելի ճամբայ մը ունէր կտրելու մինչեւ
Նիւ-Եորք։ Օրուան մը ճամբայ միայն ա-
ռած է նք եւ տակաւին հինգ անգամ օ-
րեր, պիտի մթնանային ու լուսնային մեր
գլխուն վերեւ, մինչեւ որ ցամաքը նորէն
տեսնելու յոյսին խնդիրը գար մեր սիրտը
լնցնել։ Ո՛վ զգացած է երբեք յոյսին պա-
ղիւր, հասնիլը, կուրծքին տակ։

Ցամաքս, այն սեծ իրականութիւնը,
կը զգայի թէ անցեալ մըն էր, բոլոր՝
չորհրդաւոր մէջ գտնուողներուս համար,
որոնցմէ ոմանք սիրելիներ թողած էին
հոն եւ ուրիշներ ալ, նոյն այդ ցամաքը
ոսք պիտի դնէին նորէն, տեսնելու հա-
մար իրենց սիրելիները, միանալու
համար անոնց։ Միապագայ ու անծայր
ջուրի տարածութիւնը լեզուցած էր բո-
լոր մտքերը, իր ալիքներուն տակ խեղ-
ճելով ցամաքը։

Չորս անգամ արեւը ծագած ու մարը
մտած էր եւ մենք ալ ընտանեացած ջուրի
դրացնութեան հետ, ջուրի աշխարհի մը
քնակիչներս ըլլալիս համազօրեալ էինք։
Գէթ ժամանակի մը համար, ինչո՞ւ, ցա-
մաքի վրայ, տարբեր կը խորհին մարդիկ։
Երբ ցամաքը հեռաւորութեան կապուտին
մէջ կը ձուլուի եւ կը զգաս թէ ջուրն է
ոտքիդ տակ, ջուրը, որ ան սահմանները
չես կրնար ակնարկիդ մէջ սեղմեցնել,
այն ատեն կը գեղեկս ուրիշներու վրայ

գերակշռութեամբ հաւատքին մէջ եւ
մերձաւորիդ հետ եղբայրակցելու պէտքը
հոգիդ կը սեղմէ։ Ցամաքին վրայ, քանի-
նեքո՞ւ առջեւէն պիտի անցնէինք ան-
տարբերութեամբ, նոյն իսկ հրելով զա-
նոնք, մեր ճամբան քանալու համար Շո-
գենային վրայ, կաթիլ մը ինքնին Ու-
կիանոսին անհունութեանը մէջ, կեանքի
պայքարին զոյգութիւնները փոխուած են
բոլորովին։ Ջուրի այդ տալած թեան
մէջ միայն, տեսայ ես մարդիկ որոնք
տկարին վրայ կը գուրգուրան։

Իրարու սեղանակից, կամ գէթ իրա-
րու վիճակակից, անգործ ու ներգաշնակ
հանրապետութիւն մըն էր որ չորհրդաւոր
մէջ ճամբորդները իրենց համար կազմած
էին։ Օգը նպաստաւոր էր արդէն ու շո-
գենաւոր, մին առնէն ճեպընթացներէն,
ալիքները՝ սուրաւով կը ճնշէր, առանց
իր այդ արշաւը մէջիններուն զգալի ընե-
լու։ Շոգենաւոր միշտ կը պատուէր ջու-
րերը եւ ճամբորդներու համար միեւնոյն
էր թէ մը ուղղութեամբ եղած ըլլար
ան։ Ո՛վ երբեք, ցամաքի վրայ եղած
ատեն, պարագայաւորապէս երկրազին
թաւալումին եւ կ'ուզէ անոր հետեւիլ։
Ինչ որ տարօրինակ թուելիս առաջին ինծի,
ճամբորդներէ շատերուն այն փութ յոռու-
թիւնն էր, որով անոնք առնէն առաւօտ
չորհրդաւոր սեծ սրային մէջ կախուած
արձանագրութիւնը մամբաման կը
կարգային թէ քանի մղոն ճամբայ
կտրած էր արդէն չորհրդաւոր, որքան
տակաւին կը մնար կտրելու, յետոյ թէ
քանի մղոն հեռու է ցամաքը հիստիւն
եւ քանի մղոն հարաւէն, քանի որ մեր
չորհրդաւոր ալ կ'ըսուէր թէ արեւելքէն
արեւմուտք կը յառաջանար։ Ինծի հա-
մար այդ փութկոտութիւնը, ծայր տուող
անհասկերութիւն մըն էր, կորսուած իրա-
կանութեան մը կարօտ, ուրկէ հեռու-
հեռէ կը փխաւնային ամէնքն ալ,
կասկածի եւ հաւատքի կատարեալ պա-
քար մըն էր որ մարդոց հոգիները լեցու-
ցած էր։ Չորս օրէ ի վեր ցամաքը կորսուած
էր առաւելտ եւ միայն թուղթի վրայ
հաշիւներ կ'ըսէին թէ երկու օրէն վերս-
տին պիտի գտնուէինք եթէ ոչ ինչ, գէթ
նոր ցամաքը, նոր աշխարհը, Ամերիկան։

Ճամբորդութեան չորհրդաւոր օրուան ի-
րիկունը կը մերձէն չորհրդաւոր մէջ լուր
տարածուած էր, թէ մէկ երկու ժամէն
հանդիպում մը տեղի պիտի ունենար, հա-
կատակ կողմէն, Ամերիկայէն եկող չորհ-
րաւոր մը հետ որ Եւրոպայ կ'երթար կա-
տարեալ իրարանցում մը, յուզում մըն էր
որ յառաջ կը բերէր այդ լուրը մեր շո-
գենային ճամբորդներուն մէջ։ Ներկայ տա-
րիկերու բացակայութեան մը վերջ, ո՞վ
երբեք գիտցած է թէ մէկ երկու ժամէն
պիտի տեսնէ այն եակը որուն համար
ամէնէն աւելի մտածեց եւ անտարբեր
պիտի կրնայ մնալ։ Հեռուն, չորի-
զանին անհունութեան վրայ կէտը կը
գծուի վերջապէս։ Շոգենաւոր է, որուն
պիտի հանգալիքը։ Ան կ'մոտենայ վեր-
ջապէս եւ մէկ մղոնի հեռաւորութեամբ
մը, իրարու քովէ կ'անցնինք, դրօշակնե-
ներու նշաններուն ու սուրբ մանրակ
բար կը բարեկենք, եւ այսպէս կ'անցնինք

իրարու քովէ, իւրաքանչիւր անգրգուռի,
իր նպատակին հետամուտ։ Այս հանգի-
պումէն վերջ, կը զգամ թէ տրամադրու-
թիւնները փոխուած են մեր չորհրդաւոր
մէջ։ Արդէն խոսքեր մը կը շրջին ամէնուն
բերանը թէ Չէ ժամու յարատեւ խոսանք
մը ունինք մշուի մէջէ։ Գիշերը լեցու-
ցած է արդէն միջոցը եւ ես դաժան, ան-
ցողք մութին ծանրութեանը տակ կը քած,
չորհրդաւոր կամրջակէն խցիկս կ'իջնեմ։

—Ո՛ւճճճճ . . . Ո՛ւճճճճ.
Մեր չորհրդաւոր թաւ ու խոպոտ կոչն
է որ ընդուտ կ'ա թնցնէ դիւս։ Գարտաւեւ
ու յամառ կոչ մը, որուն ինչո՞ւն չեմ գի-
տեր դիւս։

Կամրջակին վրայ եւ նորէն, մշուի
տարածութեանը մէջ, ուր ակնարկը
սլացք չունի, ուր միտքը խոսանք չունի։
Շոգենաւոր մէկ ծայրէն միայն յուզում
մը կը կարգադրուի ամէն գէթի վրայ, չո-
գենային ամբողջ դրօշաւանաւ որուն թիւնն
է որ գերադուն դրգիտի մը մէջ, կը դռնէ,
ու հէգ մարդիկս, անկորոգ՝ թթերուս
ծայրն անգամ տեսնելու, չորհրդաւոր քա-
սուլումին ապաւինած։ Կո յառաջանանք,
անոր մեքենականութեան թաւալումին
տակ։

Մշուի տարածութեան մէջ, չորհ-
րաւոր իր կոնքը փռած եւ իր կալմերը
երկնցուցած, կ'երազէ դէպի առաջ իր
ծննդեղէն գուռս պոռկուելով չորիկ իր
կոչը անհուն, որ թանձր մշուի մէջ ջր-
մէջ, հեկեկանքի կը խոպոտ երանգներուն
հասած է այս Ամէնքս, չունինք ալ վո-
ղորդանի մտածումը, եւ այս օրը, մշուի
պատու մը, անդեպէն ու ապագայէն
գառուած, իր բովանդակ իրականութեանը
կը լեցնէ բոլոր հոգիները, բոլոր մտածու-
մաները։

Ինծի անպէս կը թուի թէ մարդկային
կեանքն իսկ է այդ չորհրդաւոր, տն կեանքը
տուայտագին, որուն նրէկը մոռումն է
ալ եւ որուն վաղորդայնը ապագային ծո-
ցէն չի ժպտիր։

Մեր չորհրդաւոր միշտ կը սուրաւ։ Պի-
տի կրնանք մշուի տու պատանքէն դուրս
ելլել, ո՞վ գիտէ։ Ամէն անոնք, որոնք
սոսմին անդամ ալ ճամբորդութեան
կ'ընեն, կասկածի խայթ մը ունին թէ
երբեք ալ մշուի պիտի կրնան աղա-
տիլ։ Կեանքի մէջ ալ նոյն պարագայն է
որ միշտ կը ներհալանայ մեզ։ Մտադրի
կան իրենց առեւեալ դրօշաւաններուն
թափէն մէջ, որոնք անդիտայ են թէ
վաղը երբեք պիտի ըլլաւ յաջող ու մը
իրենց հաւար։ Կեանքի մէջ, տակաւին
չի յաջողածներն են ատուք։

Շոգենաւոր մէջ կան նաեւ շատեր,
որոնք առաջին անգամ չէ որ այդ ճամ-
բորդութիւնը կ'ընեն։ Բազմաթիւ անգամ
են անգամ են մշուի այդ անստուգու-
թեան մէջէն եւ այսօր ապրիլի վաղորդայն
նին գիտակ, ուր արեւը պիտի տեսնեն ի-
րենց գիտուն վերեւ, տեսակ մը անձնա-
վրատանութեամբ, տեսակ մը տրամաւոր
հանքով կը վերադարձան անփորձութե-
րնդ հանուր իրարանցումին հանդէպ։ Գո-
ծի կեանքին մէջ ալ կան այդ անձնաւոր-
տանները, զմարտութիւններու տրամա-
բողները, արդէն անգամ մը յաճողանեան
են ատուք, անյաջողութեանը վրայ յաղ-
թանակ տանողները։

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ք Ր Ո Շ Ի Կ

ԼՈՒՐԵՐ ԶԱՆԱԶԱՆ
ՈՒ ԶԱՐՄԱՆԱԶԱՆ

Այսինքն ուրախ եմ, հոգիս կը ցնծայ...
Գլխահեղձներն ինչ անուշ ընծայ,
Տեսնել որ գրչին իր ճարտարաբանեամ
Արդիւնքն—որ ինքնին չէր արժեք գովեստ—
Ընդունելութեան ջերմ կ'արժանանայ.
Եւ մեծ ու պղծիկ, գրգռել, քահանայ,
Տէրացու, անտես, ու դպրոցական,
Զոջէր ու փոքրէր, ուր, որքան որ կան,
Կինէր, ազնիւներ ալ գեղաշնորհ՝
Արտանց կը փարեն, կը հաւնին անոր...
Կը ճաշակեն զայն գերգ պըտուղ մ'անկուտ.
Եւ երբ որք ի վեր, յորդ կարկուտ,
Ներսէն ու գրսէն, աջէն ու ձախէն,
—Սինչ լրագրագետներ լո՛ւկ «Մարդիկ» ծախեն—
Գովտանքներով համեմատած համակ,
Անկէն անհամար հեռագիր, նամակ,
Դեզ գէղ կը հանին, կուգան, կը տեղան,
Ծածկեն թաւապատ իմ գրասեղան:
Առաջին անգամն է որ, կ'ըսեն, լա՛ւ
Գրանիկագիր մերեւան ելաւ,
Որ լուրերուն խկ ամէնէն չնչին
—Նորածնութեան գրական վերջին—
Փարփոտ յանգիւր յաւէտ խառնամբոյ,
Պերճաւն ու հրապոյրն անգույ կուտայ փոխ...
Կը յաճախեն վնս, շատ կը գովեն,
—Զրոյց հեռանա «Մարդիկ»ին քովէն,
Կը գրէ մին. ուրիշ մ'ալ, Տիկին Բարիս,
—Տ. Արիստոյ՛մ, կ'ըսէ, շատ տարի:
Եւ ա՛յո, յուզուած, քիչ մըն ալ հըպարտ,
—Զիս սիրողներուն միշտ երախտապարտ—
Զը սիրողներէն՝ արգէն անտարբեր,
Զոգտանով բնաւ համակրանք, ծափեր
Կա՛մ հաճոյական խօսքեր կազդուրիչ,
Կը շարունակեմ, ձեռք կ'առնեմ գրելիչ
Եւ, գրասեղանիս առջեւ թաւապատ,
Բազմիկով, փութեմ նորէն, այս շարքով
Փաղուտ մ'ընելով լուրերու մատաղ,
Ամէն մէկուն վրայ յորինել մի... տաղ:

* * *

Էյուպ թաղին մէջ Հայ աղջիկ մը կար,
Աղբատիկ, անտէր, որ, կարելով կար,
Հափաւ կը ճարէր իր ցամաք ապրուստ:
Օր մ'Աստուած իրեն խնդաց ի վերուստ,
Զորս տարի առաջ, բարի մարդ մ'ելաւ
Զինքը կընտելեան խնդրեց Բաղդէն էր լաւ,
Սակաւն, հակառակ ջանքերու ամէն՝
Որոշր գործուեցան աղջկան կողմէն,
Հարսնութեան օփառ շննելաւ համար՝
Զի կրցաւ ճարել քրչիկ մը գումար:
Մարդն՝ բազմակն անհամբեր (հարկաւ).
Օր մ'ելաւ գրնաց ու մէ՛յ մ'ալ չեկաւ...
Տարի մը վերջը, ուրիշ մալ նորէն
Ուզեց այդ աղջկին ընել կին իրեն.
Ու նըշանուեցան... Անցաւ ժամանակ
Աղջկին հոս ու հոն վաղեց շարունակ,
Բայց, ձեռք մը հագուստ, ծրբար մը կըտաւ
Գրնելաւ համար՝ գրեմով չի գրտաւ...
Դեռ չէր եկած վերջն իր տաւապանաց,
Ներկարդ նըշանա՛ծն ալ թողուց, գրնաց...
Նոր մարդ մ'ելաւ իր գէմ, անցեալ տարի,
Ամուսնանալու կամքն յայտնեց բարի...
Համբերեց, տոկաց բաւական ատեն,
Արջն կը քալէր աղջկան սիրէն...
Բայց օփառ գրամ չը ճարեց— ինչ ցա՛ւ,
Ներքոյ նշանա՛ծն ալ իսպառ հեռացաւ...

—Վերջերս, Արմաշեան վարդապետ թաթուլ,
Դռնէ գաւառ դիմում ընելով անգույ,
Քրտան ոսկւոյ չափ գումար մը, ինչ զանձ,
Տըւեր է աղջկանն, որուն նոր մէկ անձ
Ներկայացեր էր իրեւ. ամուսին...
— Եւ հարսի ճերմակ քօշն ու թելքն ուսին,
Վերջապէս, անցեալ երկուշաբթի օր
Էյուպի ժամուն մէջ, հանդիսաւոր
Կերպով կատարուեր է հէգ աղջկան
Պրտակադրութիւնն, Եկեղեցական
Դասէն, Հայք թաթուլ, Տիրայր ու Գրնէլ
Գացեր են աղօթք ու մողթանք ընել
Որ օրհնէ՛ Աստուած այդ խնամք պըտակ,
Պարգեւ ու բարեք տայ ամէն տեսակ,
Դատարի չը մընայ իրենց վտիտ քսակ
Եւ զաւակներով գերուկ, նըրհատակ,
Հաշտ տպրին մինչեւ իրենց ձեռ հասակ:

~~~~~

Սահակ Խապետան Սրբազանն արթուն,  
Կ'ըսեն, մեծ պահքի մէջ երկրորդ շաբթուն,  
Երեսուցեմէն պիտի հեռանայ  
Դեպ, իր նորընտաց Աթոռն Ատանայ,  
Հոն Դաղկապարդի օրն, ինչ վե՛ց ցնծում,  
Կատարել տալու համար իր օծում:  
Մինչդեռ այս լուրն հոս նստած կը աղէմ,  
Պօլսէն մեկնած են Երոստաղէմ՝  
Հըրաւիրակներն, որոնք տունին  
Վեհ. Կայսեր Պերթիւն իրենց հեռ տանին:

~~~~~

Սուրբ Սարգսի Տօնին, Պօլս. այս տարի
Գիտէ՛ք քանի հատ պըտակ կատարի.
Հարսնէրներու թիւն է՝ յիսուն և չորս...
—Բի՛չ, քահանայեց գառուն շա՛տ քիչ որս...:

~~~~~

Հըրէից Արգայ խախտմանակ  
Կինն, արձակելով իր շունչը յետին,  
Անցեալ շաբթու մէջ մըտաւ գերեզման:  
Տ. Բարթոլոմէոս Սրբազան՝ թաղման  
Յաջորդ օրն ուղղեց անոր տխուր էրկան՝  
Հեռագիր մ'աղբու և ցաւակցական:

~~~~~

Պօլսէն դուրս երեւնի ինչե՛ր կը դառնայ.
Ծննդեան երկրորդ օրն իսկ, ի Վառնայ,
Եկեղեցւոյն մէջ, Ս. Սարգիս անուն,
Յիշատակ սիրոյ երախտաց անհուն,
(—Արդիւնք մը տեսած ունէ՛ր իրօք—)
Առ ատա ի խաղաղ հանգիստ ցեալ նորոգ
Գալիլայեան որոյց հէգ Մայրապետին՝
Պատարագէն ետրն՝ ամենքն ալ յոտին
Կանգնած, աղօթքով առ երկնի Ատեն
Կատարեր են մի պաշտօն հանգստեան...
Եւ ապա դուրս, ժամուն պատին քով
Գացեր են խառնելով մամուլ ու երգով
Հ. Տէրանեանի գամբանին վրան
Կարգալ օրհնարեր Ս. Աւետարան:

~~~~~

«Մտփա»ի ծանօթ Տէր և հիմնադիր  
Կարապ. Էֆէնտին, որ ինչեւ ցարդ իր  
Տարեթիւ հասուն, առաջը ձեռնուն,  
Մարին մէջ ա՛յնքան վառ կայծեր ունի,  
Պաղ տուեր, մըտեր է ցուրտն իր կողին  
Մէջ, ձգեղով զինքն հիւանդ, անկողին  
Տօթէ՛ր օրը նախիւրէն, Մտփա (իր օրդին)  
Տար խնամքներով պատած են չորս դէն:  
Մարդէնք որ շուտով ան ապաքինի  
Խրմելով գեղեր և ապա... գինի:

~~~~~

Գիտէ՛ք Եօղզատի մէջ կ'անցնին ինչեր.
Վերջերս հեռագրով հանկէ են կանչեր
Սահակ քահանան՝ ուղղակի Զօրում:
Պատճառ — պատճառն ալ ըսեմ, ըստ որում

Զօրումցիք, ի իւրով սյնքան շատ, կամ քիչ,
Զունին եղեր մէկ լաւ պատարագիչ:

~~~~~

Դատաստանական ու Տեսեսական  
Խորհուրդներն յաւէտ պատուական այնքան,  
Ուսումնականին պէս, խանդով անշէջ  
Նիստ գումարելով ներկայ շաբթու մէջ,  
Իբր արդիւնք իրենց բարի նախանձին,  
Շատ մը խնդիրներ գըրին, վերցուցին:

~~~~~

Ինչպէս որ արգէն, կայ ութը տարի,
Գ. Գարակէօզեան Էֆէնտին բարի
Գասրմ փաշայի աղբատաց նըւէր
Միս կը զրկէր որ անոնց բաժնուէր,
Վերջին անգամ ալ (փոխուած չէ աշխարհ)
Հաճեր է զրկել նորէն չորս ոչխար:
Ներսէնեւութ ընտանիք թըշուառ
Միս ընդունելով, երախտօք խիտ վառ
Կիրակի օրը, եկեղեցին, հոն,
Յետ պատարագին կատարեր պաշտօն
Եւ մատուցեր են, անկեղծիկ սրտիւ,
Քրօն յիշատակին յարգանք ու պատիւ:

~~~~~

Մայրագոյն Գարբէլ վարդապետ Անդշ  
Վերջերս Պաղտատի մէջ՝ մահուան անյուշ  
Զոհ տըւեր է իր մեկ քոյրն հարազատ.  
Շատ մը բարեկամ, ծանօթներէ զատ  
Յուզարկաւորաց մէջ կան ալ եղեր  
Տեղացիներէն զանազան ցեղեր...  
Ամէնքն բոք են «Հայր Սուրբ, մենք կուգանք  
Մեռնողին և ձեզ ցոյց տալ մեր յարգանք»:

~~~~~

Հաւ եկեղեցին որ ի Գանալիլի,
Պիւտօճ մ'ունեցած է միշտ, պարտով լի:
Ըստաւելով որ օր մալ ունենայ
Քիչով գոհացող մաւշաւ քահանայ,
Եղաւ այս շաբթու խնդրոյ առարկայ.
Գանալիլի մէջ գերեզ անձ մը կո՛ւյ,
Ծանօթ, Մելիքեան Տիար Եղիազար,
Որ մեր հանրութեան գործոց մէջ հազար
Միշտ իր խանդն ու խելն արկած է ի կեր:
Մելիքեան երկար մեկ տեղեկագիր
Պատրաստեր է, խիտ լուրջ ու բանաւոր
Եւ մատուցեր է Ս. Պատրիարք Հօր:

~~~~~

Պոյաղիտէն հոս շատ գիր ու նամակ  
Գալով, կ'ընամանք թէ մինչեւ հիմակ  
Առաջնորդական տեղապոս՝ Պալեան  
Վարդապետն, անխնայ գործունէութեան  
Ազգայնիկներ հոն տալով ամէն օր,  
Կրթական յարկեր բանայ նորանոր:  
Եւ կը խնդրեն որ իրեւ վարձ, անոր  
Ս. Պատրիարք Հայրն հաճի ընել շորհ  
—Անո՛ր որ արնի իրեւ հովիւ քաջ—  
Կուրծքին առնել տալ պատուոյ լանջախաչ:

~~~~~

Գասրմ Բաշայի Ս. Եկեղեցին
Պատարագ ընել հրաւիրեցին
Վերջերս, Պատրիարք Հայրն (օր չեմ յիշեր):
Այն տան մէջ ուր գնաց անցունել գինիք
Սրբազնագոյն հիւրն— Էֆն հրամանաւ
Տան տիկինն, այգուն, աղջիկ մը ծրնաւ:
Շատ ուրախ եղան մայր-հարսն ու փեսան,
Պատրիարքն՝ աղջիկն ընդունեց իր սան,
Եւ փանկիկն՝ երեկ երբ կը մըկրտուէր,
Ոսկի խաչ-շղթայ մ'ըտտացաւ՝ նըւէր
Ամենապատիւ իր կնքահայրին.
Անունն Ա՛ն ոգեց. Ոգուհի գըրին:

ԱՐԽԱՂԱՐՄ

ԱՆՀԱՃՈՅ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

ՄԵԱՆԿԱՌԹԵԱՆ ՄԸ
ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

Այս օրը տարի կայ, կարծեմ, Պոլսոյ հասարակութիւնն որ մը զորմանքով լսեց խոշոր սնանկութիւն մը, որուն շուրջը անմիջապէս կատարած լինի փոփոխութիւններ սկսան թռչողի Սնանկացողը շափաղանց ճարպիկ կը համարուէր. «իր դործը» տեսած չորսու համար փոփոխութիւնները պարզ կարծիքի վրայ հիմնուած կը մնային սակայն, տառնց թէն զանազան կրկնողները սառնին ապացուցանելու իր թական փաստերը ու նենային Առջի մէկ երկու օրուան մէջ, միակ կատարած իրողութիւնը սնանկացողին աներեւոյթացած ըլլալն էր, ինչ որ չէին համարձակեր զգացեալ վիճակի մը վերագրել, նոյն իսկ բարեմիտ գտնուիլ ուղղակի ըլլալն էր, անհաւատալի զորոյ մը կայծակի արագութեամբ տարածուեցաւ շուրջ կողմը. — Սնանկացեալը կը գտնուէր Պոլսէն քանի մը ժամ հեռու անտառ—գարնանաւայրի մը մէջ, որ տափուկ-գոռոնայի եւ լուսնային երեւոյթներով շուրջը լսեց խոշորները, կառնակերպած այս լազան խորհրդանշութիւնները, քաղք հինգ տակի բոքերները՝ գարնանաւայրին այս ցեղաներուն զարմացումի առիթներ կը մատակարարէին:

Զարուի ընդհանուր եղաւ այս տարածանքութեան վրայ. վարկեան մը՝ աշխարհ խօսեցաւ այն բնածին կոպտութեան վրայ որ սնանկացող մը իրեն հաւատարմութիւն ունեցողներուն վրայ խնդալու կը մզէ. Ի՞նչ օգուտ որ մէկէն մէկ ընդհանրացող զարուիները շուրջ այ կը մարին ընդհանրապէս Գանի մը աշխարհ վերջը երբ սնանկացեալը գործը կտրուողի իր պահանջատէրներուն հետ, փոխանակ զաւրոյթի բացառանքութիւններուն, հիացումի մեղմ ձայնարկութիւններ սկսան լսուիլ:

— Վարպետ՝ զի, կ'ըսէին շատերը, ինչպէս յաջողեցաւ մէջէն ուղածին պէս ելլել:

* *

Այս մոռցուած միջոցէն մտաբերեցի, երբ—քանի մը օր կայ—սեւագոյժ մահուան մը առիթիւ, որ սիրուած անունի մը հանդէպ հանրային յարգանաց ու շնորհասիրութեան հանդիսաւոր արտայայտութեան մը պատճառ եղաւ, ուրիշ սնանկացողի մը «փոխան ծաղկեպտակի» «ինչը մեկնոց» մը զրկելը կարգացի մեր մեծագոյն բարեգործական հաստատութեանը:

Կը խնդրեմ «Ծաղիկ» ընթերցողներէն, որ միջադէպը զատեն անոր առիթ եղող

տխուր պարագայէն, ինչպէս նաեւ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ բարեգործութեան տարածուելուն պէտքէն, զոր կը գնահատենք մոմենտալ:

Խնդիրը՝ իր սկզբունքի հարց կը ներկայանայ սա ձեւով. —

«Սնանկացեալ մը՝ որուն գործը դեռ դատարաններու աւջեւ կը գտնուի, որ դեռ հաշուեյարգարութիւն մը նոյն իսկ ունեցած չէ իր պահանջատէրներուն հետ, իրաւունք ունի՞ր դրամական նուէր մը ընելու բարեգործական հաստատութեան մը:» —

Թողլով օրէնքին տրամադրութիւնը որ շատ բացայայտ է, պարզ արամբանութեան ալ կը ցուցնէ թէ ո՛չ:

Անշուշտ Ս. Փրկչեան Հիւանդանոցը կարօտ է ազգային լուսնային սկսելով ամէն օմանգակութեան, անշուշտ ամէնէն պղծական օգնութիւններն ալ՝ մեծագոյն մեկնասութիւններու հաւասար երախտագիտութեամբ կ'ընդունին կարօտեալներուն կողմէ՝ որոնք ազգութիւն կը սիրեն եւ ոչ համարել Սակայն պէտք է որ ամէն մարդ իր ստակը տանի գթութեան յարկին. սնանկացող մը չի կրնար իր պահանջատէրներուն իրաւունքէն բան մը վերցնել ու այդ գանձանակին մէջ նետել, որքան ալ բարի ըլլայ իր զիտաւորութիւնը: Զեղծութիւնն այս եղանակն է՝ շատ ակներեւ է . . . :

Ինչ որ զեղծութիւնն աւելի ուշագրաւ է, մեծագոյնութեան յամաւ արամագրութիւնն է, որ չընկճիր նոյն իսկ ամբողջ քաղաք մը խօսիլ տուող սնանկութենէ մը ետք: Եթէ արծաթ մէճիտիւ մը զրկել, օրինակի համար, սնանկացողը, ու այս համետ գումարը կարգացուէր ուրիշներու կողմէ նուիրուած ոսկիներու շարքին մէջ, ամէն մարդ պիտի հասկնար թէ յարգանքի գրասկան մը տալ ուղած էր տխուր պարագայի մը մէջ, եւ զարուած էր ինչպէս որ համետութեան պայմանները կը պահանջեն: Սակայն օրուան նուիրատուութիւններուն մեծագոյն գումարին հաւասարիւր շատ կը մատնէ անուղղաւ գոցումովութիւն մը, որուն նուազագոյն յանդանքը անտեղի ըլլալն է: Անպարտեալ ըսելու, սակայն, թէ՛ քիչ մը առաջ ինչուածին նման, վաղը պիտի մոռցուի այս միջոցէն ալ. ու երբ պարագայիկէ՝ հաշուեյարգարութիւնը զայ, շատեր պիտի կրկնեն վաղածանօթ յանկերգը:

— Վա՛յ վարպետորդի, ինչպէս ելաւ մէջէն:

* *

Ինչպէս ելաւ, կամ ինչպէս պիտի ելլէ, անիկա չէ որ կը շահագրգռէ զիս, այլ ահագին վտանգը՝ որ կը սպառնայ մերիներուն վայելած ուղղամտութեան համբաւին:

Խոշոր սնանկութիւններու յաջորդութիւն մը կայ, տարիներէ ի վեր, Պոլսոյ եւ երկրին զլխաւոր քաղաքներուն առեւտրական հրապարակներուն վրայ: Զպիտի քննեմ թէ ինչ պատճառներէ առաջ կուգան այդ սնանկութիւնները, ինչպէս նաեւ չպիտի քննեմ անոնց ամէնուն անխաղախ ըլլալը կամ մէջերին նենգութեան գտնուիլը: Ակներեւ է որ այդ մեծագոյն սնանկութիւններուն մէջ, սնանկացեալները երբեք չեն ունեցած ոչ թէ կորուստին 1/10-ին կամ 1/20-ին հաւասար հարստութիւն մը, այլ նոյն իսկ անոր 1/50-ը, կամ 1/100-ը շատ անգամ: Հոն ուր խարդախութիւն չկայ, միտումը կամ շատ աններկիւն անզգուշութիւն մը անուրանալի է, ու ասիկա կը բաւէ որպէս զի սնանկացողները՝ եթէ ոչ միշտ նիւթապէս՝ զէթ բարուապէս զատապարտուին: Դիտենք որ վաճառական գասին ամբողջութեամբ հետ բազմաթիւ չնչին փոքրամասնութիւն մը կը կազմեն միայն՝ այս կերպով սնանկացողները. սակայն ինչ որ վտանգը սպառնալից կ'ընծայէ՝ խիստ պատուաւոր անձնաւորութիւններու նոյն իսկ կատարելի հաշուեյարգարութիւններ ընդունին է, երբեմն գութի, երբեմն ալ հաշուի նկատումներով, մինչդեռ իրենցմէ կը սպասուէր անողոք կերպով դատաւարի, երբ զիջումի երեւութիւններ, կամ նոյն իսկ իրողութիւններ կան:

Պահանջատէրներու այս թիւը վիճակը պատկառանքը կը նուազեցնէ վաճառականութեան մէջ: Սնանկութիւնը՝ որ շատ կսկիռ առիթով գործողութիւն մըն էր դեռ երեսուն տարի առաջ, տեսարանային ձեւերով մը յաջորդութեամբ պատկերելու պէս քանի մը ձեւը կ'առնէ: Սնանկացեալները կը համարուին թէ պահանջատէրներուն ուղածին ընդունել տալու իրաւունքը ունին . . . ու օտար հրապարակները՝ որ այս ամէնը կը տեսնեն՝ վարկը որ է օր կը քաշեն մեղմ:

Վտանգին ազդեցութիւնը կը կրկնէ արդէն:

Ո՞վ պիտի բլլայ սկզբունքի տէր պահանջատէրը՝ որ ամբողջ առեւելքին ի կ'կորսնցնի այն առեւելքով՝ հրապարակին վրայ ՈՐԻՆԻԿ մը առաջ բերէ, անողոք դատաւարութեամբ մը:

Կը սպասենք:

ԱՐԴՈՍ

Եւրոպայէք «Ծաղիկ» իրեն սկզբունքը ըրած է անձնակազմութեան շուրջ դարձող վեճեր բնաւ չյարուցանել:

«Ծաղիկ» որդած է անպատասխանի բաղու բոլոր այն ճիշտարարութիւնները, որոնք անձնական գոյն ունեն, զուրկ հանրութեան օգտակար քննադատութեան հանգամանքէն եւ կ'ուղղուին բերքի խմբագրութեան կամ ալիստակիցներուն դէմ:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՂԱՐՈՒԵՍ

ԹԱԼՍՈՒՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ

Գերմանացի մը, Ատոլֆ Թայնթոր, վերջերս Թալս-
մոյի այցելութիւն մը տուած ըլլալով, կը ներկայացնէ
նոյն անունով ծերունի ոռոս գրագէտին հետ ունեցած
խօսակցութիւնը որ մասնաւորաբար գրական և գե-
ղեցկագիտական խնդիրներու շուրջ դարձած է։ Այդ
խօսակցութիւնէն կ'արժէ մէկ քանի շահեկան մտեր
ներկայացնել։

— «Ան ընդհանրապէս ոտանաւորի բարեկամ չեմ,
ըսած է Թայնթորի այդ խօսակցութեան միջոցին, «ո-
տանաւոր գրելու ժամանակը անցած է։ Գրողին հա-
մար միշտ դժուար է իր մտածումները տալաշափեալ
տողերով յայտնելու։ արդէն շատ դժուար է մայրենի
լեզուին մէջ, ոտանաւորի տանը միշտ յարմար բա-
ցատորութիւնը գտնել։ Կարգ մը արուեստն ր, կը մեռ-
նին ժամանակի տեւողութեան միջոցին, և այսօր ո-
տանաւորի արուեստը, արձանագործութեան արուեստը
և ճարտարապետութիւնը մեռած են։ Վերջերս տեսայ
արձանագործի մը աշխատութիւնը, գործարար մը ներ-
կայացնող, որ յոգնած քունը տարած է աշխատու-
թեան պահուն։ ասոր արուեստի արժէք մը կը տըր-
ուի, սակայն վերջապէս բան մը չի նշանակեր այն։
Ճարտարապետութեան մասին Վերթոր Հիւլիօ ալ արդէն
ըսած է իր՝ Notre-dame de Paris վեպին մէջ։—
«Դրքի տպագրութիւնը պարենեց ճարտարապետու-
թիւնը։ Նկարչութիւնը սակաւին շատ բան ունի մեզի
ընկել։ Շէշքերթին չեմ կարող հանդուրժել։» Բայց այս
խօսքէն անմիջապէս վերջը ինքզինքը ուղղելով աւել-
ցուցած է։— «Ո՛հ, սակաւ ամէնէն ճիշտ բացատրու-
թիւնը չէ, մենք մեր ժամանակին մէջ այլեւս չենք
կրնար Շէշքերթի կարգով։ Անիկա իր ժամանակին մէջ
իր դերը խաղացած է։» Դալով Կէօմէէին, Թալսմոյ
ըսած է։— «Անոր գրութիւնները ամբողջ 37 հատոր-
ներ կը լեցնեն, բայց անոնցմէ ո՛րքանը ոչինչ արժէք
ունին։ Մօտաւորապէս երկու հատոր պիտի ըլլայ ին
իր գրածներէն անոնք, որոնք ճշարտապէս գեղեցիկ
են։ Ի՞նչ են իր եղբերգութիւնները և ծառերգու-
թիւնները։ Ֆատաղն ալ չեմ իրեր։ Ի՞նչ ըրած է որ
Կէօմէէ. ուրիշ ոչինչ բայց ԵՍէ ըսել որ գեղեցի-
կը գեղեցիկ է. սակաւ ամէնէն ալ գիտենք։ Ան-
շուշտ, Կէօմէէէն շատ մը էջեր սիրով կը կարդամ,
ինչպէս նաև Շիլլերէն ալ, զոր Կէօմէէն բարձր կը
դաստիարակէ։» Պայրէնի նկատմամբ ալ խօսելով Թալսմոյ
յայտարարած է թէ, անոր գրութեանը մէջ ալ շատ
մը տկար կողմեր կան։ «Մարդ, իր ուշադրութիւնը
ներկայիս աւելի պէտք է դարձնէ լուսագոյնին վրայ
այն գրագէտներու երկատիրութեանց, որոնց անուն-
ները այնքան յաճախ չեն արտասանուիր, ինչպէս օ-
րինակի համար Քլոքիմը։»

Թալսմոյի կարծիքով անգլիացի քննադատ Արնոլտ
Շար բանաւոր առաջարկ մը ըրած է ըսելով որ բոլոր
գրութեաններուն մէջ ամէնէն աղէկները փնտռելով ա-
նոնցմէ պէտք է տեսնել մը կանտաղիտ պատրաստելու
Անգլիացի բանաստեղծ Շէլլիի մասին ալ խօսք բաց-
ուելով, անոր մասին հիացումով խօսած է Թալսմոյ,
ԵՍէ աւելցուցած միեւնոյն տանը թէ իր լուսագոյն
արտադրութիւնները իր արձակ էջերուն մէջ կը զըտ-
նուին։ Միշտ նոյն տեսակցութեան միջոցին Թալսմոյ
Քանդի մասին ըսած է թէ ան իրական հանճարեղ
մէկը եղած է, որ զարգացման նոր աստիճան մը կը
նշանակէ իմաստասիրութեան պատմութեան մէջ։ Քան-
դի մասին իր գնահատումը հետեւեալ կէտով վեր-
ջուցելով Թալսմոյ. «Ըսուած է թէ բոտ պարագային երեք
տեսակ գիտնայ կայ։ Առաջին՝ ինչ որ կրնանք գիտ-
նալ, երկրորդ՝ ինչ որ պարտաւոր ենք ընել, եւ
երրորդ՝ ինչ որ պէտք է սպասենք։ Իմ կարծիքովս
աւելայն խնդիր է միայն գիտնալ այն գոր պարտաւոր
ենք ընել։ Անհիմնական բանականութեան քննադա-
տութիւնը այն գիրքն է, ուր այս մասին միշտ կը խօս-
ուի, բայց շատ աւելի կարեւոր է գործնական բու-
նականութեան քննադատութիւնը, որ աւելի զանց
կ'ա նուիր։»

Գ. Բ. Ի.

ՄԵՐ ՀՈՐԻԶՈՒՆ

★ Դոպլէն երէց, Գոմէսի Ֆրանսէզի
առեւտրական գերատնայ, մեր պատերազմ
մէջն է, ինչպէս պիտի բեր Ֆրանսացին եւ
երկուստեքին միմեկեւ երկէ գիշեր տուա իր
ներկայացումները Բըրքի-Շանի բաւարոյն
մէջ։ Իր դասական խաղաց «ճիւղ» բաւար-
ուէրները հանդէպ ունեցան սեւեւիւր Մօլի-
էր Les précieuses ridicules եւ Le medecin
malgré lui կասկեկեցութիւններ, Օժիէի Le
gendre de M. ne. Poirier եւ Տօսէի L'arlésienne
բաւարախաղեր, սովորական յաջողութեամբ
ու փայլով։ Դոպլէն ներկայացուց նաեւ Ա.
լէվիի L'abbé Constantin բաւարեցութիւնը,
հաղուած նո հանուն վեպէն գոր ինչպէս կը
յիշուի Հաւրէի բարգմանած է Օր. Եւփի-
մէ Օսեան։ «Փաղիկ» յառաջիկայ քիւով
պիտի հրատարակենք ընկալման compte
rendu մը Դոպլէնի այս կինո ներկայացում-
ներուն առիթ. գրուած ծանօթ բաւարական
քննիկագիրէ մը։

★ Կը լսենք թէ Բօրի «Փոր» մը բնա-
սիրութեան վրայ» գրին բարգմանիչը, այս
միջոցին մեծ էստանով բարգմանելու վրայ
է Կօնգու. եղբայրներուն մէկ ծանօթ վե-
պը։ Անգագոյնապա չլրացու համար չենք
ուզեր աւելի խօսիլ այս մասին, բայց կը-
նանք ապագայ քննիչ, Գր. Մալխաս այս
նոր քա գնահատիւ ով, որուն յաջողութիւնը
հարաւարակի չէ ալ մեզի համար, գեղեցիկ
revanche մը տաւած պիտի ըլլայ բոլոր ա-
նոնց, որոնք կասկածի տակ դիմ իր բնա-
դասի հմտութիւնը ու լեզուագէտի կարողու-
թիւնը։

★ Մօս ասեմէն, Մասքուսեան սպա-
րանէն կը հրատարակուի Գր. Զօհրապի ա-
սարաւան Երջանի մը մէջ հրատարակած
նորագէտներուն մէկ հաւաքածոն։ Աւելորդ է
ըսել թէ ալ հրատարակութիւնը օրումն գի-
ր պիտի ըլլայ, մուցեն չարով ալ հաղ-
տաւոր գոր գրական հրապարակը կու տայ
մեզի ասեմէն մը ի վեր, իր միօրինակութեամբ
եւ անհասկնալի արտադրութիւններով։

★ Ս. Փրէկեան Հիւանդանոցի նուա-
զանդէսը նախորդներէն աւելի փայլուն
ըլլալ կը խոստանայ ալ սարի։ Գարբիէ
ԷԷ. Նորասուէկեանի տնակը, իր նախա-
գահ Կարգապի Մասնաւորին, արդէն գրա-
ւական մըն է ինքնին հանդէսին թէ նիւրա-
կան, թէ՛ արուեստական յաջողութեան։ Նա-
խորդ սարին, նուագահանդէսը Իւնիօն Ֆը-
րանսէզի արտին մէջ տնակով, զգալապէս
մեծ արդիւնք մը գտնուա նիւրակա սեա-
կէտով, թէն բոլոր ներկաները դժգոհութիւն
յաջանաւ էին տնակի անհաւատութեան համար։
Անցեալ սարի, Բըրքի-Շանի բաւարոյն մէջ
ներկաները շատ հանգիստ տնակին նախ-
աւ, բայց հասոյրը նախորդին չափ չեղաւ։
Ո՛րն է ուրեմն թէ՛ հասոյրը ապահով ու,
թէ՛ հանդիսատեսներուն հանգիստը ապահո-
վելու միջոցները։ Կը յուսանք թէ Կարգապի
Մասնաւորին, որ հեզգիտէ փորձառու ե-
ղած է այս մասին, պիտի կարենայ այս ան-
գամ դարման մը գտնել եւ լուծել այս իրա-
կանապէս դժուարին հարցը։ Կը լսենք նաեւ
թէ նուագահանդէսին պիտի մասնակցին Օր.
Արիին Տասեան, չհաղ մանօլիմահարը եւ
Պր. Մարմանակ Ֆեհրեան, երիտասարդ հայ
նկարիչը եւ Պառլիմ օնը, որ գրեթէ անմանօր
մըն է մեր հասարակութեան համար։

Ս.

ՆՈՐ ԳԻՐ ԵՒ ԵՐ

★ Քարիզի մէջ այս օրերս հրատարակ-
ուեցաւ Ժօրժ Օնէի մէկ նոր վեպը, Թշնի
Վաճառական (darchand de Poison) որ ալֆօ-
սականութեան դէմ գրուած կծու բնադա-
սական մըն է եւ ա՛նոր հեշտուն ով հառա-
պալ մարդկութեան մը արտայայտ պատմու-
թիւնը միանգամայն։ Ա.ս առիթ գրուած
գրականական տեսութիւններուն մէջ, «Դար-
նոցապետ»-ին հեղինակին այս նոր վեպը իր
օրումն գրական է՛ն կարեւոր հասարակութեան
մէկը կը նկատուի։

★ Մեծ յաջողութեան մը տանձնագրած
ն իր նոր գիրք մըն ալ Զօրաի ճշմարտութիւն
(Vérité) վեպն է որ հրատարակուեցաւ այս
օրերս։ ճշմարտութիւնը երրորդ հասարակ է այն
հարկին գոր մեծանուն հեղինակը սկսաւ գրել
տակէ երեք տարի առաջ, բայց չորրորդ եւ
վերջին հասարակ որուն վերնագիրը պիտի ըլ-
լար Արդարութիւն անկասար կը մնայ Զօրաի
կանխատես մտածամբը։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

★ Ֆրանսական Ալպարէսի երէց ան-
գամ Էռնէստ Լըյուվէ աւ ամիս բացուց
իր ինքնուրուի օրերնորդ սարին եւ ի պատիւ
իրեն այս երջանիկ սարեղարձ Կօնգու, գրական
եւ բաւարական երկայնով մը։ Քա-
րիզի է՛ն բարձր միջակայքի կինոյն ներկայ
գտնուեւ են ծախաւարելու համար այս հրո-
մարտապէս անմահ ու եղական գրագէտ։

★ Քարիզեան Ֆեհրեա, Ֆե-
միա, կազմակերպած է ոտանաւորի մըցում
մը, որուն մասնակցելու ի տուեմէն մի միայն
կինոնուն կը մնայ։ Ֆեհրէ մարմինը կը կազ-
մեն նուագէտ գրական եւ ընկերական առ-
խարի մէջ անուն ունեցող հասարակ չափ կին
գրողներ, պատմական նախադասութեամբ
Ռուսական թագուհի Գառմէն Միլիայի։
Մըցման նիւթերն են. Ա. «Սօնէ մը», Բ.
«Մեհախօսութիւն մը», Գ. «Մըց մը», Դ.
«Քերտուած մը», ամենին ալ ստանաւ։

★ Առաւելեալ Հիւսիսի մէջ, գ. երեք
քննադակն Երջանակէն ներս, Վ. Գ. Լօր
(W. T. Lopp) անունով Անգլիացի մ, իւրա-
բարութեամբ կը գրաղի։ Իր հրատարակած
քերթին անունն է The Eskimo Bulletin, որ
հաւանականաբար միակն է ալ տնակ, հեշտ-
աբար մըց կից չունենալու նախաձեռնի
ինակին տնակ։ Թերը կը հրատարակուի
Բ. ինն ով Ուէլլս (Prince of Wales) գրուին
մէջ, աւ ին միակ . . . մէկ անգամ տակաւն։
Պր. Լօր չէ մուցած իր քերթին հաղապ-
գրելու նախ։—«Միակ միամեան ամբողջ
առեւտրի մէջ։»

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

★ Արդէն բնագէտներուն ծանօթ է թէ միջո-
ւորաբար, երկրի մակերեսին իւրաքանչիւր հարկեր-
բարձրագին վրայ որքան ճշու մ ի գործ կը զնէ-
Սոկայն խնդիր է գիտնալ թէ երկրագունտ շրջապա-
տող ամբողջ միջոլորտը որքան ճշու մ ի գործ կը զնէ
երկրի ամբողջ մակերեսին վրայ։ Այս խնդիրը, լուծ-
ուելու համար, զերծ չէ սոկայն դժուարութիւններէ,
քանի որ հեշտագին անտարազող միջոլորտը բոլորովին
աննշմարելի կերպով միջոցին մէջ կը կորսուի, և այս
պատճառաւ միջոլորտին ամէնէն վերի տանիները
կարելի չէ ճշգրէ։ Ո թեմն մարդ ստիպուած է, տեսա-

ԿԱՆԱՆՑ ԲԱԾԻՆԸ

Շարաթաթերթ «Ծաղիկ» ներկայ թիւով կը սկսինք նոր բաժին մը, որ որքան օգտակար, այնքան կը յուսմանք կարեւոր պահանջ մը կուգայ լինել մեր հրատարակչական գործունէութեան մէջ:

Շարաթաթերթ «Ծաղիկ» կանանց բաժինը պիտի խմբագրուի մասնաւոր խնամով: Այդ բաժինն միջ է որ պիտի երեւան օտարազրուած յօդուածներ, կանանց բարոյական, մտաւորական և ֆիզիքական յառաջդիմութիւնը իրենց նպատակ ունենալով: «Կանանց Բաժինը» էջին մէջ, մեր ընթերցողուհիները տալիք պիտի ունենան նաև ընդհանուր քաղաքակրթական խորհրդի կանանց զարգացման ամէն մէկ քայլին հետեւելու: Բաց աստի, շարաթաթերթ «Ծաղիկ» խմբագրութիւնը որչաժ է հրատարակել թէ՛ Հայ և թէ՛ օտար նշանաւոր կիներու կենսագրութիւնները, ցոյց տալու համար թէ անանք ինչպէս կրցած են իրենց գործունէութեամբ օգտակար հանդիսանալ իրենց պատկանած ընկերութեան: Այս բոլոր յօդուածները, ինչպէս դիւրին է տեսնել նպատակ ունին բարձրացնել կնիք բարոյական ու մտաւորական մակարդակը և ասով զոյն ընկերային անհատ մը դարձնել:

Կնոջ ընկերային անհատ մը դառնալը բնաւ արդեւ մը չէ, որ անկողնայ միշտ ընտանեկան յարկին հիմը չմնայ: Շարաթաթերթ «Ծաղիկ» խմբագրութիւնը առիթով պիտի ունենայ իր կարգ մը կնոջ ընտանեկան յարկին հետ առ ընդունիլն ունեցող յօդուածներով, ցոյց տալ թէ կին մը կրնայ այնքան տանտիկին ըլլալ որքան սաղմնի կին և որքան մտաւորական էակ մը, տէր իր կամքին, ճաշակներուն, սկզբունքներուն:

Շարաթաթերթ «Ծաղիկ» յաջորդաբար յօդուածներ պիտի հրատարակէ այնքան առտնին անտեսութեան, որքան ձեռագործներու, նորաձեւութեան և խոհարարական բաժիններու վրայ:

Պշտիկներու ֆիզիքական ու բարոյական խնամքը որքան կարեւոր, այնքան ալ մեր բոլոր մայրերը, դասընթացի խնդիր մըն է: Հետեւաբար

շարաթաթերթ «Ծաղիկ» որ կ'ուզէ «Կանանց Բաժինը» հետզհետէ կատարելագործեալ վիճակի մը հասցնել, անուշադիր չպիտի անցնի այդ խնդրին վրայէն: Պշտիկներու ֆիզիքական խնամքին նկատմամբ, «Ծաղիկ» միջ յառաջդիմային պիտի հրատարակուին, ամէն մայրէ հասկնալի ձեւով յօդուածներ, ձեռնհաս աշխատակցի մը կողմէ պատրաստուած:

«Կանանց Բաժինը» այսօր կը սկսինք առտնին խոհարարական յօդուածով մը, զոր կը խնամարարենք կարգաւ, մեր բոլոր ընթերցողներուն:

Սկսելու համար խոհարարութեան ճիւղը, կը փափաքինք նախ սեղանի պատրաստութեան վրայ խօսիլ, օրինակի համար ներկայացնել սեղան մը տասերու հարիւր տարեկան համար, ամէն մը, որ խոհարար մը և սպասարար մը կամ սպասուհի մը միայն կայ:

Ամէնէն առաջ պէտք է պնակները, գաւաթները և բոլոր սպասները առկէ անցնել, եւ վերցնել անոնց մէջէն ճաթած, ծայրը կտրած փրթած որ և է անթիւները, որոնք պատիւ չեն բերեր տանտիրուհիին: Այլ անցնել նաև արգելուած սփռոցները, անձեռնոցները, որպէս զի վրանին արատ մը, ծակ մը չգտնուի: Հոգ տանիլ որ պատրաստադրանքը, զգալները փայլուն ըլլան, եւ դանակները սուր:

Ճաշէն ժամ մը տաժ, պէտք է ճաշարահին մէջ գտնուած բոլոր սեղանները ճերմակ կամ գունաւոր քանուած սփռոցներով ծածկել, ինչ որ սիրուն երեւոյթ մը կու տայ սրահին եւ մանաւանդ սպասները առնուած ու դրուած ատեն անոնց ազմուկը կ'արգիլէ: Անոնց վրայ իրենց գործածութեան կարգու շարել բոլոր պնակները, գինիի շիշերը եւ ջուրի սրուակները, որպէս զի ճաշի ատեն բան մը փնտռել հարկ չըլլայ:

Ճաշի սեղանին վրայ պէտք է փռել նախ կակուղ ծածկոց մը molleton, անոր վրայ սփռոց, ու յետո՛ւ կ'սկսեն լայնքով փողոցի մը, (chemin de table) որ սեղանին մէջ ծառէն մինչեւ միւս կ'երկարի, եւ որ կրնայ պարզ ըլլալ կամ բանուած, ճերմակ կամ գունաւոր, քստքմաց: Պէտք է դնել պնակները 60 սանտիմէթրի հասի իրարէ հեռու, որպէս զի հարիւրեակները իրենց արմուկով զիւր չենգնեն: Իւրաքանչիւր պնակի աջ կողմը դանակը եւ զգալը, ձախ կողմը պատա-

ռաքողը, եւ անոր վերեւ այնքան զաւաթ, որքան տեսակ րմպելի կայ: Յետոյ պնակներուն մէջ անձեռոցը եւ հարդ:

Հացկերութիւն ատեն երբեք կարելի չէ գործածել փոքրիկ յենակները, որոնց վրայ կը դրուին պատառաքողը, դանակն ու զգալը ամենօրեայ ճաշի ատեն, ինչպէս նաև չեն գործածուիր անձեռոցի կապերը:

Սոդին անդին պէտք է դնել աղանդերի փոքրիկ յենակները, աղի ու պղպեղի ամանները, ջուրի սրուակները: Իսկ հացը սփռոցիկով ծածկուած սակառի մը մէջէն սպասարար պէտք է տայ ամէնուն՝ պատառաքողով: Շատ գեղեցիկ սփռութիւն մըն է սեղանին մէջտեղը եւ ծայրերը զարդարել ծաղիկներով, տեղանք զետեղելով ծաղիկի եւ պտուղի սկահներ, ջանալով տալ անոնց շարուածքին սիրուն երեւոյթ մը, որ տան տիկնոջ ճաշակէն կ'ախտ ունի:

Ուրեք սեղանին սփռոցին վրայ, ասոյին անդին ծոցիկ կը ցանեն, ոմանք փոքրիկ փնջիկներ կը դնեն, որոնցմով տիկնայք իրենց չիւղները կը զարգարեն: Գաղափարը նոր չէ անշուշտ, քանի որ հին Հռոմայեցոց դրանիկներուն սեղանին վրայ վարդ կը տեղար վերէն շաւուած:

Ճաշի ժամուն, սպասարարը սեղանի վրայ կը հանի, եւ ճերմակ քամակէ ձեռնոց կը դնէ: Իսկ սպասուհի մը միշտ պէտք է ճերմակ գոգնոց կրէ, եւ որն ալ ըլլայ, թեթեւ եւ առանց կրօնիկի կօշիկներ հագնի, որպէս զի ոտքին ձայնը չելլէ:

Կերակուրը պէտք է ձախ կողմէն ներկայացուի կոշնականին, ուշադրութիւն ընելով որ սպասարարութեան պատառաքողին կամ դրակին կ'օր չաղտտի: Հապտակ պարագային, պէտք է անմիջապէս փոխէ կամ դնէ սրբէ: Ուշադրութիւն ընէ նաև որ պնակները փոխուած ժամանակ անոնց ձայնը չելլէ, եւ կերակուրներէն մաս մը չկաթէ մէկուն վրայ:

Իսկ կոշնականները զուարթ պնակներ անոնց ամէն մէկուն զատ զատ հոգ տանիլ, տան տիկնոջ պարտականութիւնն է, որուն վրայ թերեւս առիթ ունենանք ուսրիչ անգամ խօսելու:

ՔԱՆԱՔԱԿԱՆ

Կ ՎԵՐԻՐԵԼԻՆԸ

★ Հարաւային ամերիկեան պատիկ հանրապետութիւն մը պահ մը բաւական զբաղեցնող բնոյճանութիւն գիւտնագիտական աշխարհը, ամենքան իր սխալներովը, որքան լատի իր շանդղութեամբը: Այսօր, ուր խնդիրը հաշտարար կարգադրութեան մը լատեցած է, կ'որոշէ ուշագործութիւն գտնուել պարագաներու վրայ, որոնք ամէն գիւտնագիտական խնդիր վարող ղեկ մը ունին:

Վենեզուէլական կառավարութիւնն էր ամէնէն աւելի, որուն համար կարելի էր սեղ թէ իր վերամէկն աւելի երկնցոյց իր օտարեր, բնորոշող թաղաքականութեան մը հետեւելով ան տեսակ պետութիւններու հանդէպ, որոնք շատ զերաւ կրնային իր այդ անխոհեմութեանն օգտուելու եւ գործը իրեն սուղի նստեցնել: Մանաւանդ որ Քասցրօ, վենեզուէլական հանրապետութեան մէջ գտնուող օտարականներուն նկատմամբ թշնամական բնութացքի մը հետեւած տեսն, վենեզուէլական բմբուտ տարրի մը հետ մաքառելու հարակիւ ներքեւ ալ կը գտնուէր: Արդէն ամէն քաղաքական ինքնութեան ինքնագիտական անգլիական եւ գերմանական պետութիւնները մասնաւորաբար՝ ուղղակի բռնի ոյժի գիմեցին պատմելու համար Վենեզուէլայի պէս պղտիկ հանրապետութիւն մը, իր ծայրայեղ յանդգնութեանը մէջ, իրաւունքը ամէնէն վերջը բնական է, իրենցը պիտի բլլար, պարզապէս զօրաւորը բլլալուն համար: Քասցրօ պահաս մը գործած էր, իր չափը չգիտնալուն: Քասցրօի պակասը ասով չի լմնար սակայն: Քասցրօ՝ ի պաշտպանութիւն իր երկրին շահերուն գործած տեսն, գիւտնագիտական ամէնէն կոպիտ սխալները բրաւ: Եւրոպական մեծ պետութիւնները, միշտ գիւտնագիտական բանակցութիւն, ներսով եւ հաշտարար եղանակով կը նախընտրեն կարգադրել ամէն ծագում առած վէճ, պայմանաւ սակայն որ, իրենց ղեկավարներն ալ իրենց բնութագրովը բոլորովին անկարելի չգործեն հաշտարար ոգիով բլլալով ամէն բանակցութիւն: Քասցրօ նախագահը, հակառակ իր առաջին անգամ գործած սխալին, նորէն կրնար բանակցութեան մտնել եւրոպական մեծ պետութիւններու, ի մասնաւորի Անգլիոյ եւ Գերմանիոյ հետ, եթէ սակայն առայդ ունենար սրատեսութիւն մը: Քասցրօ այդ բանն ալ չ'ըրաւ մինչեւ որ գերմանական շանդղական նաւարած ինքներ պաշարման տակ ասին վենեզուէլական ծովեզրներու Այս ամէնը եղաւ միշտ ի վնաս անոր, որ իր ղեկավարներն աւելի

տկար էր, այսինքն ի վնաս վենեզուէլական պղտիկ հանրապետութեան:

Վերջին հեռագիրները արդէն հազորդեցին թէ վենեզուէլական ծովեզրերու պաշարումը վերցած է: Այս կարգադրութիւնը, որքան որ արդիւնքն է Մ. Նաւահաններու գեսպանին հաշտարար միջամտութեան, նոյնքան ալ հետեւանքն է վենեզուէլական պղտիկ ոյժին պարտութիւն: Եթէ Քասցրօ, Եւրոպացիներու հանդէպ իր թշնամական ընթացքին առնել, կարենար աւելի քաղ ղնել իր դրոշմը մէջ, ապահովաբար շահողը ինք պիտի բլլար, որովհետեւ ժողովուրդներու այսօրու քաղաքական կեանքը զարնեղը գիւտնագիտութիւնն է եւ գիւտնագիտութիւնն ալ, պարզապէս համեմատ քաղ գործածելու գիտութիւնն է:

★ Երկու ամիսի մօտ ժամանակէ մը ի վեր թերթերը կը գրեն այն բոլոր քրնական այցելութեանց մասին, զորս Անգլիոյ գաղթական նախարարը՝ Չեմպերլէյն, Հարաւային Աֆրիկէի մէջ կը կատարէ եւ այդ առթիւ կ'արժանանայ տեղական տարբերուն, գլխաւորաբար Պոնդերուն, ամէնէն ջերմ ընդունելութեանց: Խնդիրը ինքնին որքան պարզ, սակայն ունի իր շատ ուշագրաւ կողմերը:

Անգամ մը որ բրիտանական կառավարութիւնը իր իշխանութիւնը տարածեց Թրանսվալի եւ Օրանժի ազատ հանրապետութեանց վրայ, ա' անկից վերջը պէտք էր հետամուտ բլլալ սիրաշահելու իր իշխանութեան ներքեւ ինկող ժողովուրդները, որովհետեւ լաւ կերպով զանոնք կառավարելու համար բաւական չէր զօրաւոր պետութիւն մը բլլալ, հարկ էր նաեւ սիրուած պետութիւն մը բլլալ այդ պօէր ժողովուրդներէն: Այդ գործը կատարելու համար, ամէնէն յարմար անձն էր Չեմպերլէյն որ արդէն անգլիական պատերազմի տեսն ալ ամէնէն աւելի ձեռնբեցութիւն ցոյց տուաւ: Չեմպերլէյնի նպատակը, Հարաւային Աֆրիկէի մէջ պարտաներ կատարելով, նախ քան Եւրոպայի եւ տեղական բոլոր պէտքերը եւ երկրորդ, ամէն ներկայացող առիթէ օգտուելով սիրաշահիլ Պոնդերը: Անգլիական կառավարութեան համար, Հարաւային Աֆրիկէի մէջ օգտակար քաղաքականութեան մը հետեւելու միակ միջոցն է, ուսումնասիրել բոլոր տեղական պետքերը եւ անոնց բնոյճանութիւնը կերպով փափաքուած եղանակով մը գոհացում տալ: Յետոյ, Հարաւային Աֆրիկէի մէջ ժողովուրդը ուղղակի ի' քր բլլալով ամէն յառաջդիմութեան միջոցը եւ լծակը միանգամայն, երբ այդ ժողովուրդը տաք սրտով մը կապուած չ'ըլլայ տեղական կառավարութեան հետ, տարաւոր չկայ որ այս վերջինս կողմէ վատնուած ամէն ջանք եւ զօհոգութիւն չեն կրնար այնքան բնորոշակ սահմանի մը մէջ արդիւնաբերել:

Չեմպերլէյնի քննական պատշար ուրեմն, Հարաւային Աֆրիկէի մէջ, ունի իր մասնաւոր արժէքը, քանի որ անիկա արտայայտութիւնն է անգլիական քաղաքականութեան, որ կը ձգտի նիւթական բարգաւաճման եւ զարգացման կայուններ զարնել ամէն տեղ: Գործնական մը իր գերիշխանութեան ներքեւ կ'առնէ: Այս տեսակ առողջ քաղաքականութեան մը արդիւնքն է որ բրիտանական կայսրութեան մէջ արեւը բնաւ մարը չի մաներ:

ԼՈՒՐԵՐ

★ Ձուոյ կը չ'ընէ թէ Հապէստանի Մեղիք թագաւորը իր յարաբերութիւնները խզած բլլայ իր երկրին ֆրանսական ներկայացուցիչին հետ:

★ Կը հաւատուի թէ Պելճիքա չինական կառավարութեանն ստացած է թիէն Ձինի հիւսիսային կողմը Բէւ-Նոյ գետին ալ կողմի տարածութիւններ:

★ Պերլինի մէջ փետրուար 9ին բացուեցաւ երկրագործական բնկերակցութեան համաժողովը: Համաժողովին նախագահը յայտարարեց թէ նոր սակաւորացը զմեզ պիտի մըն է գերման երկրագործութեան համար:

★ Ռուս կառավարութիւնը պատմական միջոցներ ձեռք առաւ, ամեն փինդան տաքիներէն ղեկ, որոնք անցեալ տարի չէին փութացած զինուորագործութեան հերկայանալ:

★ Բարիզէն Բրիտ ժողովուրդը ձիւրալարի մասին յօդուած մը հրատարակելով, կ'ընէ թէ այդ ամբողջութիւնը ալեւս չի կրնար միջերկրականի բանային նկատուելի, քանի որ ի հարկին չի կրնար անարդիւն կատարելագործուած զրահաւորներու անցքը նոյն տեղէն:

★ Բէլգ, Թրանսվալի երեմինի պօէր կառավարութեան վատիչներն մկը, փետրուար 18ին Նիւ-Էօրքէն ճամբայ ելաւ ղեկի Հարաւային Աֆրիկէ: Նիւ-Օրլէանի մէջ տեսակցութեան մը միջոցին Բէլգ յայտարարած է որ ինք եւ իր բնկերները Թէքսասի մէջ 200 000 արտաւար տարածութեան հոգեր բնորոշ են, այդ տեղուանքը 1000ի չափ ապարակներ հիմնելու համար: Այս օգտակարութեան մէջ պիտի հաստատուին չ'առով ամեն Պոնդերը որոնք անհաշտ կը մնան Անգլիացիներուն հետ:

★ Ձինական կառավարութիւնը, իրաւաւած 1900 վերջին պատահած չիտութիւններէն, սկսած է ներկայիս շատ աւելի բանաւոր բնութացքի մը հետեւի եւ թույլ չտալ որ Պոքսրներու շարժումը ծաւալի, բնորոշ օտարներուն Այսպէս, կը հազորդուի Շէնալէն եւ Քանսուէն թէ բնորոշներ կացութիւնը կատարելապէս վատահոգուցիչ է: Պոքսրը Ձուովար Թուրքիոյ սխալի մարդկը զրաւ ստացած չ'ըլլալով կը բրաւն հաղնետէ: Միտնաւորներ ալ ապահովութեամբ ղեկի գիւտեբեր կ'երթան, ուր չինական իշխանութեանց կողմէ սիրով կ'ընդունուին:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Կ Ե Ա Շ Ք

Մ Բ Յ Ո Ւ Մ Ը

Ե Ի

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱՐԿԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Առեւտրական ամէն հրապարակի, աւելն տեսակ գործառնութեանց ջիգն է մրցումը. ան է որ վաճառականութեան, սեղանաւորական փոխանակութեան, արհեստական, արուեստական, վերջապէս աշխարհի բազմազան գործառնութեանց ոգին կը կազմէ. գիրար գրելու նպատակաւ լաւ մը խորհրդածուած նախաձեռնութիւնները կրնայ ըլլալ որ յաջողութեամբ պատկեն այն անձը որ զայնս ի գործ դրած է։ Մինչեւ իսկ եթէ առաջին անգամ իր մտադրութիւնը յաջող ելք մը չունենայ, ան չի վհատիր, յարատեւ մրցող մըն է, ձեռնութեամբ չի մնար գործելէ՝ հանդէպ իր մերցակցին ի դրժ գրած միջոցներուն, եւ հաւանականաբար որ մը յաջողի զիմացինը զիսկ եւ հետեւաբար անոր շահն ալ իրիկ։ Մրցումը, այսինքն ճշմարիտ մրցումը օգտակար կրնայ ըլլալ ամէն տեսակէտով որքան զայն կատարողին՝ այնքան ալ սպառողին (յաճախորդին) համար, երբ զիմացինը այսինքն մրցակիցը կործանելու նպատակ ունենալէ աւելի, սպառողը շատցնելու, աժան ու զիրամատչելի պատմաններով սպառողին օգուտ ու շահ չեղց տալու կը ձգտի։ Դիմացինը կործանելու հաշիւով եղած մրցումը միւսապէս կար է անոր համար որ թերեւս մրցողը նոյն ինքն կործանի այդ առթիւ սխալ քայլ մը առնելով եւ կամ հաշիւը կորստեցնելով. ինչ որ յաճախ պատահած է։ Իսկ բուն մրցումը, այսինքն աժան տաւել, սպառողին օգուտ բնաւարելու միտող մրցումը կը կայանայ 1. որ եւ ինչէ ապրանքի մը արտադրութեան, ծագումին, պատրաստուելուն աստիճան, մրցակիցներէն ճարպիկ փոխելուն, աժան ապրանք բնութիւն մէջ, 2. ծախսաց նուազեցումն, կարելի եղածին չափ ծախքի մասին խնայող ըլլալուն մէջ, 3. քիչ շահով բաւականանալուն եւ հետեւաբար շատ սպառող կարենալ ընելուն մէջ։ Այս հիմքերուն վրայ դրուած մրցում մը միշտ կը յաջողի. տաւելաւ, առեւտրական գործառնութիւնք կ'ընէ զարձակութիւն, կ'ընդլայնին եւ օգտակար արդիւնք յառաջ կը բերեն։ Մրցումի պատճառով որ օր զգալի զարձած է ամէն կողմ. այսօր ոչ միայն ի Պոլիս ալ եւ զաւանդներն ալ մրցումի համար ուղղակի Պոլսոյ վաճառականներուն կը դիմեն, փոխանակ իրենց յանձնակատարներուն (քովիսիօնի) գրելու, ինչպէս յառաջագոյն կ'ընէին, առողջ յանձնակատարին տրուելէք 100ին 1-2 յանձնառողքէք մը շահելով առաւել եւս

կարենալ մրցելու համար իր հրապարակին վրայ։ Մրցումը ստիպած է այսօր բոլոր Պոլսոյ մեծ վաճառականները, որպէս զի անոնք ծովեզերեայ բոլոր կարեւոր, կեդրոն-նաւահանգիստներու մէջ միմեքանոցներ (տէլիֆո) հաստատեն, հոն մեծաքանակ ապրանք հանելով, յանձնակատարի մը միջոցաւ ծախել տան։ Վաճառականներու այս ձեռնարկը խիստ օգտակար է, անոր համար որ, նախ գաւառացին իր մօտ այսինքն նաւահանգիստը ապրանք կրնայ գտնել, եւ երկրորդ վաճառականը ուղղակի նաւահանգիստները ապրանք զրկելով, փոխադրութեան, քարափի եւ ալ ծախուց մասին կարող կ'ըլլայ խնայող ըլլալ։ Մրցումը վերջապէս ստիպած է յաճախ վաճառականները, որպէս զի անոնք կարելի եղածին չափ աշխատին առեւտրական միջնորդներէ հետեւ մնալ, այսինքն ուղղակի արտադրողէն առնելով, ուղղակի սպառողին տալ, կամ պարզ խօսակով միջնորդի դերը իրենք կատարել, անոր համար որ շահերը ազգատ ըլլալուն, ուրիշ կերպով կարելի չ'ըլլար գործել։ Թէեւ ընդհանրապէս առեւտրական գաղտնիքն ու ներդաշնակութիւնը պահելու համար առեւտրական միջնորդները պաշտպառելու անհրաժեշտութեան համարիտ, հակող եւ փափաքող են, բայց ստիպուած են շատ անգամ իրենց կառքին անկախաբար, մրցման հետեւանօք, միջնորդին շահուն զպչիլ։

Մրցումը, մինչեւ հոս բացատրածին նայելով, առհասարակ չի իյ յատկութիւն մը ունի, պիտի կարծուի անշուշտ։ Սակայն ցաւայի է ըսել որ այսօր մեր հրապարակին վրայ անանկ մրցումներ տեղի ունենալու վրայ են, որոնք, յաջողցնելէ աւելի կործանման կ'առաջնորդեն զայնս ի գործ գնողները, եւ այս է լոկին, դէշը, միւսապէս։ մեր հրապարակը, ուր ամէն գործառնութիւնք կը ստանան, ամէն գործի մարդու մտքի հայելին մէջ, զիրաւ կը նշմարուի ո՛ր եւ է անհաշիւ, յոյժ մրցում կը տեսնուի, զոր օրինակ, թէ միմեքան Կէս զըշնոց ի յիս մը կամ բազէն մը 100 փարա ի կը ծախեն այն տեսակ մեծ վաճառականներ, որոնց ծախքը համեմատաբար բնաւ չի ներեր այդպիսի անօրինակ մրցում մը. անիջպէս անոր բնութագրին նկատմամբ զօրացներ կը յերիւրուին, կասկածներու վրայ հիմնուած զրուարդ շուտով ամէն կողմ կը տարածուի, թէ խոշոր սնանկութիւն մը հաւանական կ'երեւի, եւ անաւ Երուսաղէմ հարկադրութիւնէն ազատ, զգոյշ մնալ փարկի մասին, պանքաներ խտտապահանջ կը սկսին ըլլալ, հրապարակի ընդհանուր անտեսական տաղանապ մը տակաւ յառաջ կու գայ. ինչո՞ւ

այդ յոյժ գործառնութեան կերպը, ինչո՞ւ այդ անհաշիւ մրցումը եւ հետեւապէս ինչո՞ւ այդ զրուցները. ինչ անտարափառ նական ընթացք . . . :

Խ. Պ.

ԼՈՒՐԵՐ

★ Պոլսոյ հրապարակը շարժուս Գամպիոն յաջորդաբար ինկաւ, առաջին կարգի պանքայի եռամսեայ թուղթեր 1) 515/40 էն մինչեւ 10912/40 զըշ. ծախուեցան։ Աւելն տարի այս եղանակին Գամպիոնի վրայ աւսորինակ ամնութիւն տեղի չէր ունենար. ներկայ ամնութիւնը կը վերագրուի դրամի պէտքին. այսինքն հնչուն դրամի պէտք ունեցողը հրապարակին շնանելով կը յարմարի կոր։

★ Բամպակը ի կիւրբուլ շարժուս մեծ բարձրագում մը կրեց, անաւկ որ սբօրը մինչեւ 5 26ի բարձրացաւ, որ բսել է 15 առ 0/0 վրայ դրու, ի Մանչէսթըր մանածի գինները նոյնպէս նոյն համեմատութեամբ բարձրացան. հրապարակին ընդհանուր հաստատ վիճակը հիմա խիստ օգեւորեալ է։ Բամպակի գնոյն աւարձաբար մը շահագնաներու խաղերուն երեւոյթը չունի. հունձքի մասին տեղեկագիրներ կ'երեւի թէ միջտեղ ելան, որոնց մասին տակաւին մանրամասնութիւնք մեզ չեն հասած. յառաջիկայ շարժու կը յուսանք յայտնել։

60,000 Էրանք Եահաճ

Ինչպէս Եաբաթաբերք «Մաղիկ»ի քիւ 1ու խոսալաճ Էինք, ապօր usnrել կը հրասարակենք, Բումբիի Երկաթուղեաց արժեքուղթի ալն քիււերուն ցուցակը, որոնք 60,000 Էրանք Եահաճ են, եւ որոնք չեն ներկայացուած՝ զանաւելու համար։ Այդ քիւերն են. —

քիւ 86,929	Եահաճ	60,000 Էր.
» 154,448	»	60,000 »
» 205,114	»	60,000 »
» 551,952	»	60,000 »
» 804,015	»	60,000 »
» 1,052,414	»	60,000 »
» 1,514,177	»	60,000 »
» 1,584,217	»	60,000 »
» 1,811,514	»	60,000 »
» 1,961,240	»	60,000 »

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԲՈՒՅՈՒՆԵՐԸ

Խ Ո Ղ Ի Կ

ԴՌՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

- 1.—Ծամեկ կերակուրն ու ծամեկ նորէն,
Եւ ապա կուլ տալ զայն դանդաղօրէն :
- 2.—Ճաշի միջոցին չը խմել հեղուկ,
Շատ շատ՝ մէկ քանի կաթիլ յեղցեղուկ
Տաք ջուր, և այն ալ՝ եթէ չոր ցամաք
կերակուր մ'է որ մի միայն կերաք :
- 3.—Մտնողն որ բերնին մէջ կը մնայ կրկար,
Ստամոքսին մէջ շատ ատեն չի տոկար :
- 4.—Ուրիշ ո՛չ շատ տաք, և ո՛չ ալ շատ սառ.
Այս կանոնն հարկ է յարգել անյապաղ,
Եթէ երեսուն եօթ աստիճանաւ
Գոհացուի, վընաս չի ծընիր բընաւ :
- 5.—Պէտք է զգուշանալ միշտ, ամէն առթիւ,
Ուտելէ ճաշէր ծանր ու բազմաթիւ :
- 6.—Ճաշելէ ետքը, հովէն ու ցուրտէն
Պաշտպանել պէտք է անձն ամէն ատեն :
- 7.—Միշտ տխորժակին, պէտքին համեմատ
Հարկ է բռն ուտել նըւաղ կամ տաւառ :
- 8.—Ըստամոքսն երբ քնչ մ'յոգնած է, պարտի
Սեղանէն ելլել մարդ կէս-անոթի :
- 9.—Կերուածները չեն որ սոյնքան պիտան
Առողջութիւն, ոյժ և արիւն կուտան,
Հապա ա՛յն բաներն որք բողբոջին
Մնողարար են ու լաւ կը մարսուին :
- 10.—Ճաշէն քնչ մ'ուտալ, ճաշէն ետքն իսկոյն,
Հարկ է որ բընաւ, բուռն, հըղձազոյն
Մաքի կամ մարմնի մարդանք կամ խոնջէնք
Ո՛չ մենք կատարենք ո՛չ ալ պահանջենք :
- 11.—Ընթերթէն իսկոյն վերջը, մանաւանդ,
Երբ երթայ պառկել մարդ կ'ըլլայ հիւանդ :
- 12.—Օրն երեք անգամ լոկ, ո՛չ աւելի,
Կերակուր ուտելն է արդիւնաւոր :
Իսկ երբ ստամոքսն է յոգնած կամ տըկար,
Երկու ճաշն ինքնին է բաւ, օգտակար :
- 13.—Ճաշերուն մէջտեղ երբ անօթ եմաս,
Բաներ մ'ուտելէն կուգայ միշտ վընաս :
- 14.—Մարմնի կամ մարդի յոգնած մէկ ատեն
Պէտք է որ մարդիկ կերակուր չուտեն :
- 15.—Գիւրբն կարենալ մարսելու համար,
Ամէն մարդ իրեն ճաշակին յարմար
Պէտք է բռն ուտէ, ոչ ծանր ու խառնակ
—Բա՛ւ է միշտ իսկ, համով, մէկ պընակ :
Տ Բ Թ Ր. Մ Է Տ Ի Գ Ո Ւ Ս

ՀԱՅԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔ

★ Առաջին երեքտրակտն երկաթուղին շինած է Սիմէնս 1879ին, Պերլինի մէջ :

★ Վհնեղուէլական երկաթուղի մը, Բարաքասէն Վալէնցիա, 55 մղոն ճամբու մը վրայ 86 ներքնուղիներէ կ'անցնի :

★ Ամէն հեղուկ, բացօթեայ զրուելով քիչ կամ շատ կը չոգիանայ, Հեղուկ ներուէն մէջէն միայն կ'իսկուի և որ տարօրինակ կերպով չի շոգիանար :

★ 1902 տարուան միջոցին, Քլոնտալքի հանքերէն հանուած է 3 միլիոն ոսկիի արժողութեամբ ոսկի :

★ Սիպրիական երկաթուղին կ'ընդլայնուի, որպէս զի մարդ Բաթիլէն Բեքին հասնի 18էն 19 օրուան մէջ :

★ Գերմանիոյ մէջ կը հրատարակուին 1420 օրաթերթեր որոնցմէ 760ը Բրուսելոյ եւ 218ը Պալիերայի մէջ :

★ 1789ին, Մ. Նաճանգներու թղթատարութեան տարեկան ծախքն էր 1500 անգլիական ոսկի : 1902ին Մ. Նաճանգներու կառավարութեան 23 միլիոն ոսկիէ աւելի արժած են ընդհանուր թղթատարական ծախքերը :

★ Հունգարիա, որ առաջին պետութիւնը եղած է, հեծելանիւր թղթատարական ծառայութեան մէջ գործածելու մասին, նոյն առաջինը եղած է միեւնոն նպատակին համար ինքնաշարժ կառքեր (automobile) գործածելուն մէջ :

★ Բիգսպուրկ, Մ. Նաճանգներու հանքածոյի եւ պողպատի մեծ կիզրոնն է Վերջերս, մէկ օրուան մէջ, ալի քաղաքէն 527 երկաթուղիի կառավարման մեկնած են, 5 զանազան ուղղութեամբ, իրենց հետ տանելով 1,756,550 թոնո պողպատ եւ անուխ :

★ Մ. Նաճանգներու մէջ, մեծ քաղաքներէ զոյս ճամբաները այնքան գէշ են որ, հաշուաւոր է թէ, ագարակականները շատ աւելի կը ծախեն իրենց արտադրութիւնները մինչեւ երկաթուղիին կայարանը փոխադրելով, քան թէ երկաթուղիին վարձքը կ'արժէ, Մ. Նաճանգներու մէջ որ եւ է տեղ մը փոխադրելու համար զանաք, Աղաթակային արտադրութիւնները, ագարակէն մինչեւ վաճառական հակառակ հրապարակի փոխադրելու համար, Մ. Նաճանգներու մէջ, մէկ տարուան բնութագրին կը ծախսուի 350 000 000 անգլիական ոսկի :

★ 19րդ դարուն սկիզբը, Լոնտոն ունէր միայն 800 000 բնակիչ, Լոնտոնի բնակչութեան թիւը ներկայիս հասած է մօտաւ օրապէս 6 000,000 : 100 տարուան ճիշդ նոյն ժամանակամիջոցին, Նիւ-Եորք, 600,000 բնակիչով քաղաքէ մը, հասած է ներկայիս 3 000 000է աւելի բնակչութիւն ունեցող մեծ քաղաքի մը դիրքին : Ներ-

կայիս Լոնտոնի բնակչութիւնը, իւրաքանչիւր տասնեակ տարիի մէջ կ'աճի 17⁰/₁₀ հաւանաբարութեամբ, մինչդեռ Նիւ-Եորք 35⁰/₁₀ հաւանաբարութեամբ :

★ Պերլինի մէջ կան 25,769 նկուղներ, ուր մարդկային էակներ կ'ապրին :

★ Եւրոպայի մէջ, օրը 63,880,000 կով կը կթուի :

★ 1902ին, Լոնտոնի մէջ 7995 փողոցի արկածներ պատահեցան, մինչդեռ 1892ին միայն 4806 արկածներ պատահած են :

★ Հանրային պարտէզներու եւ ժամանցի բացօթեայ վայրերու համար Նիւ-Եորք քաղաքը Լոնտոնէն հինգ անգամ աւելի կը ծախէ :

★ Անգլիոյ մէջ, 1902ին ամուսնացող իւրաքանչիւր 1000 զոյգէն 51 այր եւ 163 կին, չէին մտած տակաւին իրենց 21երորդ տարին :

★ Սոմալիներու երկրին ցեղապետը 27,000 հատեօրդներ ունի, որոնցմէ 10-15 ⁰/₁₀ը արդի դրութեամբ հրացաններ կը կրեն :

★ Մեծն Բրիտանիոյ տարածութիւնը Սոմալիոյի կէսն է միայն : Անգլիա, Կալիֆորնիա, Ինդոնեզիա, Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիոյ չափ տարածութիւն ունի եւ Գերմանիոյ մէկ քառորդն է միայն :

★ Բարիլ քաղաքը 51 000 փողոցի կանխիկ ունի, որոնցմէ 39,000ը միայն կը վառին գիշերները :

★ Մեծն Բրիտանիոյ մէջ, 1902ին 303,823 այր մարդիկ մեռան, իսկ կին մեռողներու թիւը եղած է 284,007 միայն :

★ Ամբողջ աշխարհիս վրայ գտնուող Գերմանացիներուն թիւը կը հասնի 83 միլիոնի : Ասոնց 10,920,000ը հաստատուած է Ամերիկայի մէջ :

★ Կ'ըսուի թէ Բրուսելոյ Հայրիչ Իշխանը իր կեանքը 160 000 անգլիական ոսկիի ապահովագրած է :

★ Մարգարիտ մը որ իր գոյնը կորսնցուցած է, երբեմն իր փայլը կը վերստանայ, վրայի մէկ կեղծւոյ հանելով :

★ Գ. Կարգի երկաթուղիով ճամբորդութիւնը իր ծախսերէն ամենաթանկն է, որովհետեւ հասած է Հնդկաստանի մէջ, ուր մէկ միջոց ճամբորդութեան համար կը վճարուի մէկ ֆարտինկ (5 փարա) միայն :

★ Մեծն Բրիտանիոյ մէջ կան 2307 զանազան նաւաշինութեան գործարաններ, նաւարաններ եւ քարափներ իսկ ապրանքային շուկայի միջոցով 4,007ի :

Արտատպեր Ա. ՈՒԿԱԼԵԱՆ

Տպագրութիւն Սագաեան
Կալարա, Գուրչուկյան խան քիւ 7

[illegible]

Գ. ԳԱՔՐԻԵԼԵԱՆ

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Բերա. Մեծ-Փողոց, Կալաթա Սերայի լիսին դեմ, քիւ. 200

ԴՂ. ԵՂ. ՇՐ. օրերը առաւօտուն կանուխէն մինչեւ երեկոյ ժամ 11½
ԲՂ. ԴՂ. Ուր. օրերը 6էն 11½, Կիրակի օրերը ժամադրութեամբ:

ՄԻՀՐԴԱՏ ՀԱՅԿԱԶՆ

ՃԱՇԱԿԱԿՈՐ ՀՈՎԱՆՈՏՆԵՐՈՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ղալաթիա, Գաբաթեօյ, Քամիսին խոհանարան

Հովանոցն նորոգութեանը ալ կը կատարուին

Ստորեւ նշանակուած շրջանակները աստիճանաբար կ'ընկնեն իւր ժամանակը: Անոնք, որոնք կ'ընկնեն այս աշիքին օգտուելու, ՏԱՍԸ ՂՐՇ. ՄԻԱՅՆ վճարելով կարող պիտի ըլլան իրենց մէկ ժամանակը այդ շրջանակներէն մէկուն մէջ գնակելու
ԶՈՐԱ ԱՆԳԱՄ:

Հեղինակութիւնը ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ 1.— Իլալէյի Սարֆի Օսմանի, Բ. տիպ. գին 6 զրչ. 12 336: 2 — Նիւմունէի էտէ-պիաթը Օսմանիէ, գին 4 զրչ.: (Քերա-կանական, համաձայնական եւ տաղաչա-փական ծանօթութեամբ): 1—4		
	Ս. ԳԱՆՃԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ Ի Բարիդ ուսումնասիրած ամենավերջին գրութեանց համաձայն դարմանումներ կը կատարէ բոլորովին նորահար գործիքնե-րով: Կ'ընդունի հիւանդները ամէն օր իր բնակարանը ի Գաթըղիւղ: Գօնսիրութեամբ օնները միշտ ձրի: Ծան. — Թաղական Խորհրդէ եւ կամ Աղքատախնամ մարմինէ վկայուած աղ-քատներուն ձրի դարմանում:	
		ՄԻՍԱԲ ՊՈՒՏԱՔԵԱՆ Վաճառատուն Պատի թուղթերու, պատկերի չրջանակ-ներու, ստորներու, եւ ին եւրն. Կալաթա, Թիւեկիմ դեմ, քիւ. 25
		1—4